ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ԶԱՆԳԱՍ ԱՄՍԵԱՑ

ԺԸ· ՏԱՐԻ 1888 ՓԵՏՐՎԱՐ

ԵԿԵՂԵԱՑ ԳԱՒԱՌ*

ՎԱՆՈՐԱՑԻ

Ս· Նէրսէս Հայրապետ· — Քաղաքէն մէկ ու կէս ժամու տարակայութեամբ և նորա հարաւային արևելեան կողմն, դարձեալ Մէրճան լերանց ստորոտն, ամենաբարձր դադաթի մը կողերէն ու գառիթափներէն ձևացեալ տարատափի վերայ, հեղհղատի կամ ձորի մը տարերքն կառուցեալ է այս մենաստանն, որ մեր մատենագրութեան մէջ Ցէրուչն կամ Ցէրուշէն անուամբ ալ կը յիշուի, անշուշտ Ցիրան Բ· արքայէն չինուած լինելուն համար· Բարձրը և թանձր պարիսպներն, ընդարձակ բակերն, ժամատունն կամ արտաքին եկեղեցին և բուն տաճարն՝ իւր

* Տե՛ս ԺԴ· ԺԵ· ԺԶ· և ԺԷ· տարի·

փոքրիկ այլ կարի վայելուչ շինութեամբ, կաթողիկէի և վերջապէս պղպեղիկ ճարտարութեամբ ու դրուագօք որ ի նմա, կը յիշեցնեն թէ վաղեմի ու բուն հայկական ոճով կրող չենք մ՚է և այցելուն կը կարծէ դանուիլ ի խորս Հայաստանի ի վարագ կամ յԱրուճ ածոյն։ Միւս կողմէ դժբաղդարար բակերուն, հրապարակաց ու անցքերուն աղտեղութիւնքն ու անկարգութիւնք կը ցուցնեն թէ ասիական չենք մ՚է այն և կը վերաբերի քաղաքակրթութեան մէջ յետնեալ ազգի մը։ Ունի բազմաթիւ յարկեր, ինչպէս ամառուան և ձմեռուան հիւրատուններ, մառաններ, խոհանոց, դոմեր, սխտառներ, ու երկրագործութեան յարմարաւոր շինութիւնք։

Ցաճարին հարաւակողման պատին մէջ կ՚երևի դուռ մը, որ կ՚առաջնորդէ անձկագոյն մթին ու գէշին անցք մը, որ կ՚անուանի Գերեզման Ս. Ներսէսի. արդարև հոն կայ, ի ձախակողմն՝ պատին մէջև զետեղուած՝ տապան մը, որ ունի գրեթէ անընթեռնուի արձանագիր, ծանկեալ է չուքջառաւ և կանթեղ լուցեալ ի վերայ։ Ազգային եկեղեցական պատմութեան ծանօթ եղողներն գիտեն արդէն թէ Մեծին Ներսէսի մարմինն, որ այս գաւառին Թիլն աւանի մէջ թաղուած էր, 1275 թուականին և Լեռն Դ-ի օրով յայտնուեցաւ, և ժամանակին առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսի միջոցաւ այս մենաստանի մէջ փոխադրուեցաւ. որ հատանգամանարար այս թուականէն իվեր սկսաւ կոչուիլ յանուն Ս. Ներսէսի։

Ժամատան մօտ է յարկածածուկ շատրուան մը՝ չբջասատեալ տախտակաշէն բարձր բազմոցներով, ուր կը հաւաքուին այցելուք և ուխտաւորք զովանալու և ընթրելու համար։

Վանուց առջևը՝ ի հիւսիսոյ՝ կայ մարգագետին մը, զոր կը հովանաւորեն հինաւուրց թթենիք, և բազմութիւն ուռի և բարտի ծառոց. ասոր կից կայ խնամով պատրաստուած ընդարձակ բանջարանոց՝ երիք կարգ բարտի ծառատունկերով և անպտուղ ծառերով չրջապատեալ։ Վանուց յետնակողմն, ի հարաւոյ, ընդարձակ

ցանկապատ մարգագետին — պարտէզ, որ կը զարդարեն այլ եւ այլ հսկայ պտղատու եւ անպտուղ ծառեր, իսկ պտղաբերու թեամբն նշանաւոր՝ ընդարձակ ու խիտ յուռթի այդ ին կը դառնայ յարեւմտեան հարաւոյ, յորմէ ոչ հեռի է եւ զուարճալի լճակ մը՝ հովանաւորեալ վարսագեղ ուռենեօք։ Վերջապէս բոլոր արտերն, մարգերն, ուղինեքն, գարերն ու գարաստանք չուրջ պատեալ եւ պճնեալ են ծառովք եւ ծառատնկովք, ընդ որս խոխոջառն կը տարին առուակի ականակիտ ջուրք։

Մենաստանն ունի իրրեւ անշարժ կալուած, բացի մարգաւայրից, այգւոյն եւ արօտավայրից, 36 կտոր արտեր, որք կը պարունակեն 408 կոտ (11 օխանոց չափ) սերմն։ Ի շարս եկեղեցական գոյից եւ սպասուց, ունի Սկիհ մը՝ ոսկեզօծ եւ գրաւոնդ իւնադարդ՝ ՌՃԿԸ թուականը կրող, երիք կտոր մատունք Ս. Ներսէսի, յորոց գագաթն է արծաթապատ եւ ոսկեզօծ, արծաթեայ խաչեր, եկեղեցական գրեան, հինգ կտոր ձեռագիր մատեան, եկեղեցական զգեստք, շարշք, անօթք բազմազան եւ բազմաթիւ։ Հարկ չէ յիշել թէ վանքը կը վայելէ առատութիւն բերքի, բամբակենիին ամէն տեսակ փուռնները խոհանոցի, երկրագործական եւ շինմարանի անօթներու եւ այլն եւ այլն։

Իրրեւ մեկուսի ու կարեւոր հնութիւն արժան է յիշատակել ժամատան վերեւեայ զարմանագործ դուռն որ ունի ճարտարին քանդակներ, կրօնական նկարուց փորագրութիւն եւ երկաթագիր գեղարարոյց արձանագրութիւն. գործ արժանի ուսումնասիրութեան վասն քննաչէր հնագիտաց։

Մենաստան սակայն, Հայաստանի բազում այլ վանօրէից նման, իւր այսքան պայծառութեան ու ճոխութեան ոչ թէ աչերն, այլ աւանգատպահն միայն էր գոգցես եւ կարեւոր որ ծանրագին ինչքն կը պահեր կարծես աւազակաց ի կապուտ, որք չէ յապաղեցան, եւ ինչպէս անցեալներն ընթերցանք ազգային լրագրաց մէջ գժբադբարաչ, վանուց պարապին տակաւ մէկ կողմէ ծակեցուկ՝ բաւական

թուով արժեքաւոր նիւթեր վերցուցին տաճարէն և ա-
ներևոյթ եղան։ Երիզայի դաշտեցի ու քաղաքացի ժողո-
վուրդը թոյլ չտայ իւր բարեպաշտիկ առատաձեռնու-
թեամբ յառաջ եկած ջնասը դարմանել, թերին լնուլ և
վանքն սիրուիլ վերստին ու պայծառացնել զայն, վասն
ոյր . . . ։

Ս. Ներսէսեան վարժարան Գիշերօթիկ.— 1880 թուականին
սկիզբը, երբ Գեր. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան եկե-
ղեցւոյ գաւառին վրայ առաջնորդ ընտրուեցաւ, գիւղա-
կան դպրոցաց վարժապետ հասցունելու նպատակաւ որո-
շեց Ս. Ներսէսի վանուց մէջ գիշերօթիկ վարժարան մը
հաստատել։ Ժամանակին Գաւ. վարչութիւնն և ուրիշ
հեռատես ազգայինք թէև իրեն յիշեցուցին այն ամե-
նամեծ և անյաղթելի դժուարութիւնքն ու արգելքներն
որոց պիտի հանդիպէր նա անվրէպ՝ ի մասին նիւթական
մատակարարութեան՝ հաստատուելիք կրթարանին, ա-
ռաջարկեցին, փոխան նոր դիշերօթեայ դպրոց մը բանա-
լու մէն մի գիւղէ մէկ կամ աւելի մանուկներ բերել ու
կրթել տալ քաղաքին վարժարանաց մէջ, գիշերօթեայ
համար ենթադրուած ծախուց կէսը միայն յաւելուլ ջա-
նալ այդ վարժարանաց տարեկան պիւտճէին վերայ։ այս
կարգադրութեամբ, կ'ըսէին, թէ քաղաքին վարժարանք
կը պայծառանան, թէ վարժապետացուք՝ քաղաքային,
ազատ ու լաւագոյն կրթութիւն կ'ստանան, և թէ վերջա-
պէս Ա. Առաջնորդին ոյժը չը բաժնուիր, թոյլ խնայողու-
թեան մասը։ Նորին Գերապատուութիւնն պնդեց իւր որոշ-
ման վերայ և ժողովրդային հանգանակութեամբ բացաւ
վարժարանն՝ բնականաբար ամենամեծ դժուարութեանց
կուրծք տալով։ Առաջին տարին՝ որովհետև ուսանողք
սակաւ, գործը նոր և ժողովուրդը եռանդուած ու յու-
սալից էր, ամենայն ինչ լաւ ընթացաւ։ Քաղաքացի մի
քանի կարող ազգայինք գոհացուցիչ տարեթոշակներով
կը պաշտպանէին մէկ մէկ սան, մէն մի գիւղ՝ իւր տուած
աշակերտին համար կը վճարէր ցորեան, լուբիա, յարդ,
փայտ, բանճարեղէն, և այլն, և այլն միանգամայն։ Ա-

կայն հետզհետէ բեռին ծանրութիւնն զգալի եղաւ, և մինչդեռ Հիմնադիր—խնամակալ Սրբազանը կը ջանար ուսանողաց թիւը չատցունելով հասոյթը կրկնապատկել, ճիշտ այս եղաւ իւր մեծագոյն սխալն, որ և պատճառ եղաւ վարժարանին փակման։ Վասնզի ի բացակայութեան Հիմնադրին, կարելի չը լինելով այլևս տոկալ անբերելի ծանրութեան վարժարանին, որ յայնժամ կը պարունակէր 40 ուսանողաց և 10ի չափ ծառայողներ, գոցուեցաւ վերջապէս։ Այսպէս՝ անհեռատեսութեան ու անտեսութեան անյատակ փոսն սուզեցաւ աղքատիկ այլ կարի ուսումնասէր դաւառի մը քանի մը հազար ոսկւոյ գումարն, ինչպէս կը հաշուէին ու դիտել կուտային իրաղեկ ու փորձառու անձինք, ի համարի դնելով նաև այն 150 ոսկւոյ ուրոյն գումարն, զոր Դիմաքսեան Սրբազանը ըստացաւ կ. Պոլսոյ Սովելոց ցանձնաժողովէն՝ ի ձեռն հոգելոյս Տ. Ներսէս Ս. Պատրիարքի, և զոր Ս. Ներսէսի վանուց չինութեան գործածեց։ Այս իրաւ է սակայն թէ դիշերօթիկ վարժարանին հաստատութեան չնորհիւ վանուց վարելահողերն և այլ կալուածներն չկնցան, հազարաւոր ծառատունկք անկուեցան, տաճարն բարեզարդեցաւ, վանքն նորոգեցաւ և 10–15 գիւղային ուսուցիչներ պատրաստուեցան։

Զարդիս վանքն յանձնուած է Դերջանցի Տ. վարդան քահանային խնամոյ, որ իւր գիւղին փոխ նշանաւոր հոգատիրոջ մը բռնաբարութեանց ու յափշտակութեանց չկարենալով տոկալ և Դիմաքսեան Սրբազանի վարչութեան դիտմամբ ու աղերս ընելէ վաստակաբեկ, քանդեց իւր նահապետական ու երկրագործութեան տունն ի հայրենի գեղջն, լքաւ իւր սակաւաթիւ ժողովուրդն իրրև որս գայլոց, և չունչն Ս. Ներսէսի վանքն առաւ, զոր մշակելու և զարգացնելու փոխէ կ'տանի. երանի թէ յաբատևութիւն ու յաջողութիւն լինին իւր բաժին։

Գաղափար մը տալու համար ընթերցողաց այն պայմանաց ու պարտականութեանց մասին, զորս յանձն կ'առնուն կատարել եկեղեաց դաւառի վանորէից վանապահք,

կամ վարձակալը, վարձակալութեան պայմանագրի մը պատճէնը կ՚օրինակեմ ատա։

Ը։ Ներբեսի վանուց Հոգաբարձութեան և վանապահ —վարձակալին միջև տեղի ունեցած է այն պայմանագրութիւնն։

1։ Վանուց այսպէս պիտի լինամ տանիմ, ինչպէս իմ սեփական կալուածքիս։ պարտական եմ կատարել ինձմա այն ամեն շինութիւն ու նորոգութիւն, որոյ ծախսը աւելի չէ քան հարիւր դահեկան։ պարտաւոր եմ նոյնպէս ի գարնան վանուց շրջակային մէջ տնկել երեք հարիւրի չափ ուռի ու բարտի ծառատունկեր։

2։ Վանքապատկան բոլոր գոյգերն, զորս Հոգաբարձութիւնն համրելով ու տումարաւ ինձ կը յանձնէ, թուական մէկ տարի վերջ իրեն պիտի գարձնեմ հինցածներըն նորոգելով։

3։ Իջեղբաց ինձ յանձնուած լինելով ութ ոչխար։ եօթն այծ, հինգ կով ու երեք հորթ, մէկ տարի վերջ Հոգաբարձութեան պիտի վերադարձնեմ զոյնս նոյնութեամբ։ պատրաստ եմ, ըստ հնաւանդ սովորութեան, ամեն առաւօտ այցելուաց բաշխել մածուն, կաթ, և այլն։

4։ Եկեղեցւոյ մատունքի, գանձանակի հասոյթը և իմ ծառայութեանցս համար ստացած դրամական պարգևներս ինձ կը պատկանին։

5։ Վանքապատկան բոլոր հողային կալուածոց ելքն տուրքը ես պիտի վճարեմ, վերջը փոխարէն՝ յարդէն վանքի բաժինն ես պիտի վերցնեմ։

6։ Վանքապատկան կալուածոց, ինչպէս են՝ այգի, պարտէզ և արտորայք, հողային բերքն պիտի բաժնուի, ըստ օրինաց հնակութեան, իմ ու Հոգաբարձութեանց միջև։ պարտական եմ այգւոյն թերի մասն ամբողջացնել։

7։ Պարտիզին քարէ ցանկապատը, որ աւերածներ ունի, յառաջիկայ գարնան պիտի նորոգեմ և պատին այժմու բարձրութեան վրայ հինգ կարգ ագիւս ևս պարտաւոր եմ շարել։

8· Յահմանեալ տարեկան եօթն ու կէս Օսմ· ոսկւոյ վարձքը կամաւ ու յօժարութեամբ պիտի վճարեմ, կէս ոսկին Թուականէս երկու ամիս վերջ և միւսդիան յառաջիկայ 84 տարւոյ Յունիս 25ին հատուցանելով։

9· Վանուց անտանոյ տղերը միմիայն վանքապատկան արտորէից ի պարարտութիւն պիտի գործածեմ։

10· Ցանուն Ս· վանուցս նուիրեալ կենդանիք, անօթք, իրեղէնք Աղբին կը վերարերին։

11· Վանուց ծառերը չպտի կտրեմ, ջուրը չպիտի ծախեմ։

Վերոյ գրեալ պայմաններով և մէկ տարի պայմանաժամաւ կ'առանձնեմ Ս· Ներսէսի վանուց վանապահութիւնը, որոյ ի հաստատութիւն կ'առտրագրեմ։

3 Օգոստոս 1883 ԽԱՉԱՏՈՒՐ Տ· ՓՈՂՈՍԵԱՆ
ի վանս Ս· Ներսէսի Եկեղեցւոյ

(Վկայ)

Ս· Կիրակոս · — Նախորդ երեք վանքերուն ուղղութեամբ, դաշտին հարաւակողմը, ձնհուրի մէկ օղակը կպաղմոզ, ուրոյն ու անջատ բարձրացող հպարտ Ղազանղայա լերան ստորոտը և սորա ողնաշարներէն ձևացեալ խորափիտ ու անձուկ ձորի մը մէջ, քաղաքէն մէկ ժամ հեռաւորութեամբ և դրեթէ ի հանդիպոյ նորա պուրակներով չրջապատեալ դիրք մը ունի այս մենաստանն, որ թէև ճոխ ու չէն չէ միւսոյ նման, այլ մերձաւորութեան պատճառաւ ունի յաճախորդաց ու այցելուաց բազմութիւն։ Դաշտը պարագծող հոծ ու լայնարձակ լեռանց անբաւ տարածութեան մէջ Ս· Կիրակոսի և անոր մերձ ձրդնիի ձորին մէջ միայն պուրակ ու թաւուտներ կը տեսնուին՝ ցրդի, մայր, հացի ու կնձնի ծառոց, որոց հըպած չէ ժողովուրդն՝ թերևս բարեպաշտական երկիւղէ դրդեալ։ Ս· Կիրակոսի ուխտաւորք ամրան վերջերն քաղքէն ուղիղ դծով մը կ'երթևեկին անդ Եփրատի հունէն անցնելով, բայց ուրիշ ժամանակներ սոխպեալ են

եփրատի միակ կամրջէն անցնելով երկար չրջան մ՚ընելու, որ մէկ ժամ աւելի կ՚երկարցնէ ուղևոր տևողութիւնը։ Վանքը՝ ինչպես ըսինք, անձուկ ու անդնդախոր ձորի մը կողքին վերայ դտնուելուն, երբ կողմէն տեսարան չունի, այլ միայն դէպի հիւսիս կը դիտէ քաղաքին և այս ուղղութեամբ դանուած բնավայրից վերայ, որու հորիզոնը կը գծէ բարձրաբերձն Սըրըքդոր (ըստ բաղմաց՝ Ս. Գրիգոր), բգաչատ ու վտանդաւոր դադաթը՝ ընդ մէջ եկեղեցաց ու փէլքիտայ, այլ բանուկ անցք ճանապարհին Տրապիզոնի։ Վանքը յեցած է ծաղկազարդ ու դալարագեղ այլ սեպաձև բլրոյ մը, որ կը համարուի առաջին աստիճանն Ղազան-Ղայա (մթին լեառն՝ ըստ ոմանց) հլսկայատիպ լեռնին. ձորոյն հանդիպակաց բլուրը, նոյնպէս ծառուտ ճղուտ՝ կը վերջանայ ցած ու փափարակ դագաթով մը որ կը կոչուի Ս. Եղիա։ Թէ Ս. Եղիա և թէ մըթին լեառն կը կազմեն միևնոյն լեռնային սոսկավիթխոր ղանգուածն, որ ընդ մէջ կը հոտանէ եկեղիքն ու Դարանաղին։ Թէև այս ձորը դալարուտ, ծաղկալից, ծառազարդ ու ղուարճալի է, այլ ոչ այնպէս անդաստանն, որ կը պարզուի իւր առջև, որու հողն անարգաւանդ է և անջրդի։ Բնակիչք Քարդիւղի, որ է ի մուտս Ս. Կիրակոսի ձորոյն, կը մշակեն այս անդաստանն ժլատ, որ լաւ կարօտադրէ սակայն ձմերուկ և սեխ։

Վանքը չունի պարիսպ, կանոնաւոր չինութիւնք բընակութեան, ճոխութիւն գոմից ու կալուածոց, այլ խըղճուկ տաճար մը, երկու հովանոց (այվան) և մի քանի փոքր սենեակներ ամրան յարմար։ Լուսադրեր չունի թէև կարի ցուրտ, այլ աղտաշատին, իսկ մածունն խիստ հանբաւական է՝ չրջակայ պարարտ արօտավայրից պատճառաւ։ Վանուց երեք նորաշէն սենեակք կառուցեալ են արդեամբք ու ծախիւք հանգուցեալ Մ. Ծովհաննէս աղայի Դանիէլեան, որու առատաձեռնութեան ու բարեպաշտութեան գովելի յիշատակներն կը՚տեսնուին եկեղեցւոյ գաւառի կրօնական ու կրթական շատ մը հաստատութեանց մէջ։ Ահա հին տանուտէր մը, որ բազ-

մաց նման իւր քսակը չէ պարապեր ի վշաս և ի կործանումն եկեղեցեաց ու վանուց անտուհներու, այլ իւր ճշմարիտ ողորմածութեամբ ու իսկական բարեգործութեամբը արժանի եղած է բարեհանբաւ դերդաստանի աչքե նահապետ անուան, նահապետ՝ որ փառք չը մուրաց և փառաց եաւէն չը պնդեց։ Մխիթարական է տեսնել թէ իւր աչնիւ սերունդը իւր բարեպաշտութեան ու առատաձեռնութեան օրինակին հետևող է։

Նկարագրութեան ու հետաքրքրութեան արժանի ուրիշ ոչինչ ունի Ս. Նիրակոս։ Մոռացուկ կոչուած վայր մը կայ վանքին ճիշտ հանդիպակաց ուղղութեամբ քարաժեռին ժէջ. խիստ գժուար ու վտանգաւոր վերելք ունեցող անձաւ մ'է այս, զուրկ բոլորովին կարևորութենէ։

Այս ժենաստանին խնամքը յանձնուած է քաղաքին արհեստաւորներէն բաղկացեալ Հոգաբարձութեան մը, որ փոյթ կը տանի չէնցնել ու զարդացնել վանքն տակաւ։

Ս. ԱՄԱՏԵԱՆ

ՕԼԻՎԻԷ

Ա

Կաղօն Վալերան իմ բարեկամս է. թէև մեկ տարեկից՝ կ'ընար միշտ նոր մեր բարեկամութիւնը։ Գրեթէ մի և նոյն ժամանակ ծնած՝ միասին մեծցած ենք։ Մեր բնակարանները մօտակայ են։ Ահա կ'տեսնես տատի իր դղեկին աշտարակիկները ու ծառաստանի հովանին։ Եմ է, ինչպես յուսալի է, հետս մի քանի օր անցնես, անվրէպ վանի սիրտ ճանչես։ Եմ է տաս տարի առաջ դինք ճանչած լինելը, սիրտ իմանալը որ կարելի է վայելել երջանկութիւն այս աշխարհիս մէջ։ Դեռ ևս նորատի

ու գեղանի՝ Կատօն Վալկրան ամուսնացեր էր օրիորդ Ս . . . ի հետ, որ նոյնպէս ծագիկ հասակին մէջ գեղաշնորհ կ'փայլէր։ Այս միութիւնը բացորոշ հերքում մ'էր բարոյապիտին դարձեաց որով կ'պնդէ թէ չկայ հեշտալի ամուսնութիւն։ Այս սիրայօդ ամոլները կ'ապրէին իրենց սեպհական հողին վրայ, պիւղացւոց բարիք կ'ընէին և այնպէս կ'երևէր որ բնաւ չէին կասկածեր թէ երկնից ներքև կրնան գտնուիլ ուրիշ խնդութիւններ քան ինչ որ իրենք կ'վայելէին պարտկներու հովանւոյն տակ։ Կարելի էր ըսել որ իրարու համար ստեղծուած էին . . . ։ Անշուշտ՝ հասարակ խօսք մ'է այս, բայց կատարելապէս կ'բացատրէ իրենց յօժարութեանց համաձայնութիւնն և զգացմանց ներդաշնակութիւնը։

Այնպէս կ'հաւատան թէ մտերմութեան հրապոյրն՝ բնաւորութեանց ներհակութենէ կ'ծագի. ես չեմ կարծեր, միայն թէ մտերմութեան հրապոյր ըսելով առաւօտէն մինչև երեկոյ կռուիլ միճել չնշանակէ։ Թէպէտ համամիտ էին այր ու կին ամեն բանի վրայ, բայց միշտ իրարու համար նոր չքնաղ աշխարհ մը կ'կազմէին։ Միայն կար բաւական ծանրակշիռ կէտ մ'որու վրայ չէին կարող միաբանիլ։ Կատօն, փիլիսոփայութեան նկատմամբ, անտարբերներու դպրոցէն էր։ Կուրանաբ, քեզի պէս, Նախախնամութիւնն և սրտագին կ'ծաղրէր այն անմինքն որ անոր հաւատալու սկարութիւնն ունէին։ Նա կը կարծէր թէ Աստուած մեզի համար բաւական հոգ տարած էր ստեղծելով տիեզերաց սկներև և աքանչելի կարգ ու կանոնն և թէ ամեն պարագայի մէջ մարդ պարտաւոր է մի միայն իր վրայ դնել յոյսը։ Տիկին Վալկրան թէ գեղանի էր և թէ բարեպաշտիկ։ Իր բարուց և հաւատալեաց հակառակ այսպիսի իմաստասիրութիւն մը շատ աւելի ծանր վիշտ պիտի պատճառէր իրեն քան ինչ որ ինք կ'խոստովանէր, բայց ի վերջէ յաղթականը տանել կ'յուսար։ Իրաւ է որ դերբնային խնդիրներու վրայ վէճերն այնքան առէպ չէին պատահեր այս նորատիպ ամուսիններու առտնին շրջանին մէջ, ուստի և չէին կարող հիմնովին վրդովել իրենց վայելած անդորրութիւնն ու երջանկութիւնը։ Ոչ ինչ չէր պակաս իրենց երանաւէտ կենաց համար։ Փոքրիկ հրեշտակ մը ծնաւ իրենց ամուսնութենէ տասնութ ամիս ետք։ Սկսելով է նկարագրել իրենց անհուն խնդութիւնը։ Պէտք էր տեսնել թէ ինչ դուրգուրանօք կ'ծռէին որորանին վրայ, որու մէջ մանկիկն արդէն կ'ժպտէր ու կ'պայլայլէր։

Աչեան մի երեկոյ նստած էր դղեկին դրանդին վրայ՝ Տիկին Վալերանի մօտ։ Մի քանի քայլ հեռու՝ դալարուէտ հոգին ջըրայ կ'խաղար Կապօն իր որդեկին հետ։ Փարիզի Օ֊ին մէջ արդէն լրացուցած էր երեք տարին. դեղափոչի մանկիկ մ'էր՝ նորածիծաղկան պէս, և արդէն ցոյց կ'տար որ իր հօրը սիրտը նմանէր լիովին։ Այս նմանութիւնն որ զգալի էր, աւելի ևս կը բորբոքէր մօր սէրն և ամուսնոյ գորովը։ Տիկին Վալերան գեղադիծաղ և երկիւղած դէմքով կ'նայէր անձայն իր աչքց առջև ունեցած պատկերին։ Յանկարծ իր զուարթ ճակտին վրայ մեղմ մ'իջաւ. տեսայ արտօսր մ'որ իր արտեւանունքի ծայրը կ'փայլփլէր։

— Ես ինչու կ'արտասուէք, դոչեցի՝ անոր ձեռքը բռնելով. ինչ ունիք։

— Անչափ երջանիկ եմ, ըսաւ նէ. կան վայրկեաններ ուր իմ երջանկութիւնս կ'ընկճէ կիս և ահ ու դող կ'ազդէ ինձ։ Եթէ իրաւ է, ինչպէս կ'հաւատանեն, թէ չ'կայ յարատեւ երանութիւն այս աշխարհիս մէջ, և թէ ամեն բան կ'հատուցուի կամ կ'քաւուի, արդեօք ինչ փորձանք սիրտի գայ գլուխս։

Չկրնաքի անդորրել մէջը. սկսայ սիրայօժար թուել այն ամեն բաներն որ պարտ էին իր վստահութիւնը կազդուրել. իր քաջասրտ զաւակն, իր ամուսինն որ նորատի և առոյգ էր իրեն պէս, իր հարստահմութիւնն որ հատուած հիմ ունէր։

— Ուրեմն, ինչ երկիւղ կայ քեզի համար, յարեցի. անամպ երկինքց վրայ չպայթիր կայծակը։

— Անտարակոյս, յիմար եմ, պատասխանեց Տիկին Վալերան ուշթափ դէմքով մը. բայց ինչ օգուտ. իմ ձեռքս չէ, մերթ ընդ մերթ կ'դողամ։

Այն իրիկուն՝ Տիկին Վալերան, իր սովորութեան հակառակ, անհանգիստ, չզսլին և մտայոյզ կ'երևէր։ Ելաւ իր տեղէն, վաղեց զաւկին մօտ և երեսները պաղատ սիրագին, և ապա ըսաւ տենդագին ձայնով մը.

— Հիւանդ չես, զաւակս, այնպէս չէ. մի՛թէ ցաւ մը կը զգաս։

Սակայն մանկիկը կայտառ, կարմրագոյն էր, նման փունջի մ'որուն ծաղիկներն հաւաքուած են մայիս ամիսուան ցօղաւէտ առաւօտուն։ Օդը փոխ֊որի կ'սպառնար. վտանգաւոր փայլակներ կ'ակօսէին հորիզոնն։ Տիկին Վալերանի գրգռութիւնը կը վերագրէի մթնոլորտի ազդեցութեան և հետևապէս անհոգ

էի։ Երբ Կապօնի յիշեցուցի որ հետևեալ օրն որթի սիրի ելնելինք և թէ մեր յատուկ բարեկամներէն շատերը սիրի կազմէին որսալան խումբն, Նորատի կնկան դոյնը նետեց և աղաչեց իր ամուսինն որ որսորդութեան չերթայ։ Առաջին անդամը չէր որ այսպէս կ'պղատակէր նէ։ Միշտ հրազէններն ներքին սոսկում մը ներշնչած էին այս փափկասուն կնկան, որուս սիրտը կ'տրոփէր ու կ'ճղուէր ամեն անգամ որ վալկրան կոմսը որսի ելնէր։ Այս անգամ մանաւանդ թախանձագին խնդրեց որ իր խրատին հետևի։ Ներակազմ, զգայուն և քնքուշ լինելով՝ կոմսուհին կ'զղջդար ահռելի դժբաղդութեան մը նախազգացումով։ Կապօն նախ սկսաւ ծիծաղիլ իր կնոջ ահու դողին վրայ, այլ վերջէն միտ դրաւ անոր խորհրդին, և որպէս զի բոլորովին անդորրէ սիրտն խօսք տուաւ վերհանձնորէն այլ ևս որսի չելնել։ Տիւին վալկրան իր ամուսնոյն փարելով իր սրտագին շնորհակալիքը յայտնեց անոր և ուրախ ու դուարթ իրիկուն մ'անցուց։

(Շարունակելի)

Ֆ. ՍԱՆՑՕ

ԿՈՎԿԱՄԷՆ

Առաջիկայ տարուանէն Աբբաթ ամսագիրը պիտի խմբագրէ Պ. Պ Սիմոնեան՝ Մեղու Հայոցին լրագրի խմբագիրը։ Հանդէսին պիտի մասնակցին մեր նշանաւոր գրչերը։ Սակայն յոյս չկայ որ մի բան չինեն. մեռելը զորով չի կենդանանալ։ Բայց ի այդ, Պ. Պ. Սիմոնեանցը մտադիր է կազմելու նորագոյն պատմութիւն Հայոց՝ Ներսէս Ե.–էն յետոյ մինչև մեր օրերը։ Հասկանալի է թէ ինչ պատմութիւն կ'լինի դա, հարկաւոր է խօ Մակարին պաշտպանել պատմութեան առաջ։

— Նոր–Դար լրագիրը որ մեր մէջ միակ ամենօրեայ (շաբաթը հինգ անգամ հրատարակուող) թերթն է, Ռուսահայոց բոլոր բարձրագոյն կրթութիւն ունեցող, խոհուն անձերի աջակցութիւնն կ'վայելէ. մտադրութիւն կայ շաբաթական եօթն անգամ հրատարակելու։ Այդ նպատակով Նոր–Նախիջևան, Բաքու,

Շուչի, Եվխավեդատոլ և այլ քաղաքների մէջ բանակցութիւն տեղի կ'ունենան։ Նոր-Դար ամենատարածուած թերթն է այս տեղ՝ Կովկասում։ Պէտք է, ասել, որ Նոր-Դար միակ թերթն է մեր մէջ, որ առանց մի կոպեկի, առանց ոևէ կողմնակի պաշտպանութեան սկսուել է հրատարակուիլ և այսօր արդէն միայնակ ներկայացուցչն է հանդիսանում ուսահատին։ Մշակ ընկաւ, Արյաֆնա այժ չունի, նա երկաք կանգնած չէ։ Նոր-Դար միայն առաջադիմում է խրոխտաբար ազգային իրաւունքը պաշտպանելով։

Լավում է որ Օրմանեան Սրբազանը հրաժարվում է Գէորգեան ճեմարանի Ատաւուածարանական ուսման դասատուի պաշտօնէն։ Նոյնպէս լավում է, որ Գեր. Օրմանեանն նշանակուելու է Թիֆլիսի թեմի առաջնորդ Գեր. Արիստակէս Սեդրակեանի տեղ։ Գեր. Օրմանեանի արդ եկքը թիւրքահպատակ լինելն է. բայց ասում են չատուվ այդ դժուարութեան առաջն ևս կ'առնուի։

— Զինաթափութիւնը վերջացաւ ամեն տեղ Կովկասում։ Ռուս թերթերը հաւատացնում են, որ ամեն տեղ էլ աջող եկք է ունեցել։ Բայց մեր ստացած ամենատարդ տեղեկութիւններից երևում է, որ չատ տեղեր խիստ մեծ խռովութիւններ են ծագել։ Այսպէս օրինակ՝ Տաթոի վանքի դիւղերում կռիւ ծագել էր դեռ զինաթափութեան առաջ, երբ կառավարութեան ներկայացուցիչներն յայտնում էին այդ մասին։ Իսկ ընտրութիւնների մէջոցին խռովութիւններ, արիւնահեղութիւններ պատահել են Շամախի, Նոր-Բայազիտ, Վաղարշապատ, Ախթանաղրօթ։ . . . Շատ զինաթափուներ փախել են թէ զինաթակոչէն առաջ և թէ յետոյ։ Բայց մանաւանդ ուշի նշանաւոր է Վաղարշապատի խռովութիւնն, որ ամբողջ երեք օր է տևում . . . Ծեծում է ամբոխը զազախներին, դաւառապետի օդնականներին, և այնուհետև խուժում է էջմիածնի բակը՝ և այն տեղից դէպ ի Վեհարան, ուր, քարերի, փայտերի տեղացող կարկտաի տակ կտրատվում են Վեհարանի բոլոր ապակիները, լսվում են ծանր աղաղակներ քացոտաքարի դէմ . . . Խռովութեան աւելի այժ տեղը կանայք են . . . չատերը դեռ բանտարկուած են։ Նորակոչ զինուորացուները հաւաքվում են Գօրի և Ամարթի (Ախալցխի մօտ)։ Ամարթը մի ամայի տեղ է. ոչ անուտ ունի, ոչ այգի, և ոչ իսկ մի ո ևէ տուն։ Նոյ Նահապետի օրից մնացած զոր խոտեր կան միայն՝ կանգուն։ Ամառը չոգ է լինում, տեղը տենդոտ է, բնակիչներ չկան։

Ձիներաժողովը երկրի ուսուցման ամենայարմար միջոցն է։ Նահապետական դիւղացու դռների մէջ անգամ Ռուս լեզուն մտնելու է հայ ուս ձիների միջոցով։ Խորհրդածութիւնները թողնում եմ ձեզ . . . ։

— Ռուսական ուսումնարանների չրջաններն տեսուչներն այցելում են շարունակ հայ ուսումնարանները և հսկում են, որ դասախօսութիւնները կանոնաւոր ընթանան։ Շատ տեղեր հայ ուսուցիչներից պահանջում են ռուս ուսուցչի վկայական. այսուհետև կարող են ուսուցիչ լինել միայն նրանք, որոնք ռուս ուսուցչի վկայական ունին և որոնց իրենք, ռուսերը կը ցանկանան։ Ռուսաց լեզուի ուսուցումը, որ Մակար Սրբազանի կազմած ծրագրով սկիզբ սկսուէր առաջին տարուց երկրորդ կէսին կէս կէս ժամ շաբաթը չորս անգամ, և այն է բանաւոր, այժմ պահանջվում է, որ սկսուի դասատուութեան հենց առաջին օրից որպէս մայրենի լեզու և շաբաթը վեցը ժամ։ Սրօնի դասախօսութիւնը՝ հայերով մի ռուս միջնակարգ ուսումնարաններում արգիլուած է հայ լեզուով։ Այդ մասին Մակարի խնդիրը, միջնորդութիւնն անցաւ անհետևանք և բացառական պատասխան ստացաւ Կովկասու ուսումնարանական չրջանի հոգաբարձու՝ Եանովսկու միջոցով . . . ։ Մի ժամանակ Գէորգ Դ հանգուցեալ կաթողիկոսը արժան չէր համարում Կայսրին դիմելիս փոխարքային միջոցով դիմելու . . . ։ Ո՞ր տեղ հասաւ կաթողիկոսութիւնը։ Դեռ շատ բան կը տեսնենք, քանի որ դեռ շատ բաներ Մակարի դաղտնի հաւանութեան և առ երևոյթական դիմադրութեան պայմանաւով կանուխէն որոշուած են։

— Անցեալ օրեր տեղական հաշտարար դատարանում քննվում էր հանգուցեալ վրացի հայրենասէր Կիպիանիի որդու և փեսի դործը, որոնք մեղադրվում էին կառավարութեան կարդադրութիւններին ընդհմագործելու համար։ Բանը նորանում էր, որ հանգուցեալ Կիպիանիին Ստավրոպոլից Թիֆլիս բերելու թոյլատուութիւն տալով, կառավարութիւնը կարդադրել էր, որ յուղարկաւորութեան հանդէսը անշուք կատարուի և առանց քաղաք մանելու թաղուի Ս. Դաւիթի եկեղեցու բակում։ Բայց՝ ընդ հակառակն՝ ժանտարմերայի չէֆի և պոլիսմէստերի պահանջումների և կառավարութեան կարգադրութեան ընդդէմ, յուղարկաւորութիւնը չափազանց մեծ չուքով կատարուեց և անց կացաւ քաղաքի ամենանշանաւոր փողոցով և պա-

լատի առաջով . . . քիչ մնաց արիւնահեղութիւն իսկ պատահէր . . . ։ Ահա այդ բանի համար անդադրմամ կին վերոյիշեալ-ներն , որոնց մեղադրում էր անձամբ պոլիտմէստեր Իօսիֆովին . . . մեղաւորներին պատժեցին . . . երկուքն էլ քսանական րուբլի տուգանք վերցնելով ։ Ահա վրացիների ոյժը ուր տեղ երևաց ։ Մենք մեզ սատրացնում ենք, նրանք իրենց բարձրացնում ։ Ինչպէս յայտնի է , Կիպիանիին սպաննել էին . այդ սպանութիւնը քննելու համար նշանակուած էր քննիչ՝ քննիչը հրաժարուել է քննութիւնից . սպանութիւնը խորհրդաւոր է ։

— Արդէն յայտնի կ'լինի մեզ, որ Մոսկվայի , Խազանի , Օ-տեսայի ։ Կիէվի , Խարկովի համալսարանները , Խարկովի կեն-դանաբանական և տեխնիկական բարձրագոյն ուսումնարաննե-րըն և այլն , փակուած են և ուսանողները ցրուած , որովհետև ուսանողները խաւսութիւն են բարձրացնում համալսարանական նոր բուռն կարգերի , կանոնների և կառավարիչների դէմ . . . անցեալներն էպատով , ոստիկանութեան ձեռքով Թիֆլիս, Քու-թայիս և միւս քաղաքներն վերադարձրին ուսանողներին . . . ։ Մոսկվայում ուսանողներ ձեռնում են մտրակների հարուած-ներից ։

Ցունվար . ՀՐԱՉ

ՎՍԵՄԱՑՈՒՔ ՄԱՏԹԷՈՍ ԻՖ· ՓԱԼԵՕՋԵԱՆ

Ազգային վերջին անցից մէջ վախմ. Փալեօղեան Մատ-թէոս էֆէնտիի բռնած վերհանձն և ազդասիրական ըն-թացքն ոչ միայն հայ հասարակութեան երախտագիտու-թեան արժանացած, այլ և պատմական մեծ կարևորու-թիւն ստացած լինելուն՝ համագրութիւնս մտադիր էր սոյն մեծ անձնաւորութեան վրայ խօսիլ ։ Սակայն նկա-տելով որ ձեռնեէ Շարչէնէ մի թղթակիցն Փ. Աչէն արդէն արժանապէս կատարած է այդ պաշտօնն ճշդրիտ և ըն-տիր նկարագիր մը ներկայելով՝ կ'արտատպենք սոյն նը-կարագիրն , որ է ·

«Ա՛ստենապատիւ Մելքիսեդեկ Սրբազան Հայրն մինակիս առաջնորդական պաշտօնէն հրաժարելէն ետքը, ինչպէս յայտնի է, Պալեօզեան վ. սեմ. Մատթէոս էֆէնտիի յատուկ հրաւիրմամբ հիւրընկալուեցաւ ի Գարաթաղ Պալեօզեան փառաւոր ապարանը: Այս առիթիւ ազգային մամլոյ մէջ սիրած է շատ յեղյեղել Պալեօզեան անունը, ուստի աւելորդ չենք տեսներ ընթերցողաց մի քանի տեղեկութիւններ հաղորդել սոյն հոյակապ հայկազունին վրայ:

Վ. սեմ. Մատթէոս էֆէնտի քաղաքիս առաջին կարգի հարուստ և յոյժ պատուաւոր վաճառականներէն մին է: Գործարքի մանաւանդ ապիւնի ընդարձակ արտածութեամբ ու երկաթի ներածութեամբ, և կարելի է ըսել, բոլոր Փոքր Ասիոյ մէջ երկաթը տարածող միակ վաճառականն է:

Պալեօզեան էֆէնտի ամեն տեսակ դործերու հմուտ, ուսեալ, շատ խելացի, ժիր, անկախ բնաւորութեան ու անդրդուելի կամաց տէր և յոյժ մեծարելի անձնաւորութիւն մ'է: Ի բնէ անտի սկզբունքի հաւատարիմ, արդ արութեան բարեկամ և ճշմարտութեան սիրահար Կրեստոս մ'ըլլալով, հանրաչին շատ ծանր խնդիրներու մէջ յաղթանակ տարած և իրաւամբ քաղքիս մէջ ԱՆՊԱՐՏԵԼԻ անուն ստացած է: Օտարազգիք կ'աքանչանան իր վրայ և, նախանձոտները մէկդի թողլով, առհասարակ կը յարդեն, կը մեծարեն և կը սիրեն զինքը: Ասոր ապացոյց քաղքիս մէջ Ահեւտարական Սենեակ հաստատուած ժամանակ միաձայն հաւանութեամբ նախագահ ընտրուեցաւ և հետզհետէ վերընտրուելով մինչև այսօր յոյժ արժանաւորութեամբ կը վարէ այս կարևոր պաշտօնը, որու անդամոց ստուար մեծամասնութիւնը օտարազգի են:

Թէև ասկէ առաջ իր բաղմադիմի գրազմանց պատճառաւ տեսական ազգային պաշտօններ չէր վարեր, բայց ամեն ժամանակ ազգին մեծամեծ ծառայութիւններ մատուցած է. շատ կնճռոտ գործեր, ծանր խնդիրներ, բաւական է որ արդարացի ըլլան, իր հզօր ազդեցութեամբ կարդադրուած են: Մեր հայրենակիցք կը յիշեն Ս. Մեսրոպեան վարժարանի վերաշինութեան համար, առանց Ազգ. Պատրիարքարանի վրայ ծանրանալու, փութով ձեռք բերած հրամանագիրը: Վերջին անգամըՕ միւռնիոյ երեսփոխանական ժողովոյ ընտրութեան ժամանակ Երեսփոխան ընտրուած ըլլալով, համեցաւ ընդունիլ այս փափուկ պաշտօնը և հետզհետէ գումարուած բոլոր ժողովներուն

ներկայ գտնուելով միւս Երեսփոխանաց բարի օրինակ հանդիսացաւ և իւր իմաստուն խորհուրդներով ժողովոյ նիստը արդիւնաւորեց։

Ամեն պարագայի մէջ ազգային սիրոյից սատար, արժանապատուութեանը նախանձախնդիր, գործիչներու պաշտպան և աշխատասէրաց քաջալերը հանդիսանալով, իրր բարեպաշտ Հայ եկեղեցւոյ պայծառութեանն ալ անտարբեր գտնուած չէ։ Իմ սիրելի հարազատին հետ որ այժմ գործէ քաշուած Եւրոպա կը բնակի, 400 Օսմանեան ոսկիի մօտ գումար մը ծախսելով ի յիշատակ իր հանգուցեալ բարեպաշտօն հօր, մարմարիոնով սալայատակեց Ս. Սահմանոս եկեղեցւոյ պատիը որ եկեղեցին չինուելէն ի վեր հողով միայն ծածկուած էր։

Իրր Օսմանեան մեծազօր Տէրութեան հաւատարիմ հպատակ՝ կառավարութեան ալ ծառայութիւններ մատուցած է։ Այլ և այլ պարագաներու մէջ կարևոր յանձնաժողովներու անդամ եղած և իտարէի ժողովին մէջ Ազգին կողմանէ բազմած է։ Բարեհնամ կառավարութիւնը դնահատելով նորա արժանիքը պատուած է Մէճիտիէի և Միւճէմայիկի ատիճանաւ։

Ահա այս հոյակապ ազգայինն է որ մարդասիրաբար հիւրընկալեց Հայ կղերին պարծանք և առաքինութեամբ ու արդարասիրութեամբ փայլող տաղանդաւոր եկեղեցականը և Զմիւռնիոյ Հայոց պատիւը պաշտպանելով՝ օտարաց առջև մեր արժանապատուութիւնը պահեց օրով առաւել ևս մեր երախտադիտութեան և հաճակրանաց արժանացաւ։

Այս նշանաւոր անձնաւորութեան համար է որ Ակնէլէ քահնից դրեց թէ «Մելքիսեդեկ Սրբազան ի Գարաթաշ ֆ մահառէյ տուն քաշուած է», և այս թերթը կը ժամ ըսել թէ ինք որ և է կառավարութեան չը պատկանիր . . . : Ընթերցողք թող դատեն։

Վաեմ. Մատթէոս էֆէնտի բնաւորութեամբ յոյժ պարզասէր մէկը ըլլալով, գիտենք որ այս տողերը կարդալով չը պիտի ամօթի և թերևս պիտի վշտանայ իսկ, բայց այս մասին ներողամիտ թող ըլլայ, քանզի եթէ մենք լռէինք, քարերը պիտի աղաղակէին։

28 յունվար 1888 ԱՐՍԷՆ

Զմիւռնիա

ԼՈՌԵԼՈՑ

Զգիտեմ թէ այս ի՞նչ է ընդհանակում,
Որ այժմ ես այսպէս տխուր եմ տրտում,
Մի զրոյց շատ հին, հին ժամանակից,
Զանցնում է զբնում երբէք իմ մըտքից:

Օդն է նով ու զով, անձա մթանում,
Հանգիստ ու խաղաղ Ռհայնն է ընթանում.
Արեւն սըփռում է վերջին ճառագայթ,
Փայլում փայփայում է լերան գագաթ:

Կոյսը նազելի հրեշտակ հրաշագեղ,
Բազմած է շքով վերեւում այնտեղ.
Շողում է նեբա ոսկեյառ մանեակ,
Եւ նա սանրում է իւր խարտեաղ գիսակ:

Սանրում է ոսկեայ իւր ձեռքի սանրով,
Եւ հետն երգում է երգ անուշ ձայնով.
Նէ գեղգեղում քաջ իբրպես սոխակ,
Երգն է հրաշալի ազդու եղանակ:

Նաւակում անձա նաւաստու սրտին,
Անձռակը պատեց յանկարծ բուռն ուժգին.
Նա դիտում չէ իւր առաջի խոյրերն,
Վերեւ պիղ յառած են նորա աչերն:

Եւ կարծում եմ որ ի վերջոյ ալին,
Պիտի կլանէ նաւն ու նաւորդին.
Եւ այս բանն արաւ իւր դիւթիչ երգով,
Լոռելոց կոյսը հրաշալի տեսքով:

ՀԱՑՆԵԻՑ ԱՐՄԷՆ

25 փետ. 1887 ամի
Տ.

ԻՆՉ Է ՍՈՐԱ ՎԵՐՋՆ

Ի՞նչ է սորա վերջն, ա՜հ, սիրտ իմ սրտիկ,
Ինչ է քեզ տանջում տոչորում սաստիկ.
Ո՜հ այս ինչ մի նոր սրտամաշ տանջանք,
Ես չեմ ճանաչում այլ եւս այս կեանք:

Ամեն բան կորաւ, ի՞նչ սիրում էիր,
Ամեն բան այլ եւս ինչ տրխմրում էիր.
Հեռացաւ քեզնից քո ջանքն ու դադար,
Ա՜հ, ի՞նչպէս դուս այս, այս տեղը նասար:

Քեզ շղթայում է դեռաբոյս ծաղիկ,
Սիրուն հասակով այս չքնաղ աղջիկ.
Հաւատարմութեամբ լի եւ բարութեամբ,
Անվերջ, անընպատ ուժով զօրութեամբ:

Ուզում եմ շուտով սիրտ առնել գընալ,
Փախչիլ ներանից ընդ միշտ նեռանալ.
Բայց աղաչում եմ, գոնեայ առ վայրկեան,
Ցոյց տուէք դէպ ներան ինձ տանող ճամբան:

Եւ այս կախարդիչ ու դիւթիչ բելիկ,
Բռնել է սիրուն չարաճճի աղջիկ.
Այս բէյն է անա անյուծանելի ,
Որն ինձ կապել է ընդդէմ իմ կամքի:

Ես պէտք է ներա դիւթիչ շրջանում,
Ապրիմ ինչպէս որ նէ է ցանկանում.
Ա՜խ այս որպիսի մեծ փոփոխութիւն,
Ազատ բո՛ղ ինձ դուս իմ սէր սիրասուն:

ԳԵՕՔՅՈՒՆ

ԱՐՄԵՆ

6 Ապրիլ 1887
Տ.

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՑՈՑԴ

Ա.

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ ՍՐԲԱԶԱՆ

Ներկայ ամսոյս 4ին տեղւոյս հայ հասարակութիւնն երախտագիտական ջերմ զգացմամբ տօնեց իր հրաժարեալ Ս. Առաջնորդի տօնն։ Ազգային ժողովները, խորհուրդներն, ընկերութիւններն և գրեթէ ամեն կարգի և աստիճանի ազգայինք յատուկ յատուկ հեռագիրներով ուղղեցին իրենց շնորհաւորութիւնները և բարեմաղթութիւնները Նորին Սրբազնութեան, որ հրապարակային շնորհակալութեան սրտաբուխ դրով մը պատասխանեց ամենուն։

Նոյն օրն աւելի սրտաչարժ և նշանակութեան արժանի տեսարան մը տեղի կ'ունենար Նորին Սրբազնութեան չուրջն ի Գըզըլ–Թոփրաք՝ Գալուստ Էֆէնտի Սէրոբեանի տունը։ Դատ մ'արժանըներ եկեղեցականներ և երեսփոխաններ՝ իբրև թարգման Ազգին զգացմանց, կ'բացատրէին անկեղծութեան և արդարասիրութեան զգալի չեշտերով այն խորին համակրանքն ու սէրը զոր կ'տածեն յաւէտ Ամեն. Մուրատեանց Սրբազանի։

Սոյն չնորհաւորական ցոյցերու նկարագիրը կ'կարդանք Ճեղիւեյէ Շաբէնյէ լրագրին 813 թուոյն մէջ։ Տեղւոյս անձկութիւնը չներեր դժբաղդաբար այդ նկարագիրն ամբողջովին արտատպել։ Ուստի բաւական կ'համարինք ամփոփել և քաղել այն մասերն որ պատմական կարևորութիւն ունին։

Ինչպէս անցեալ, նոյնպէս ներկայ ամանորի առթիւ Ազգային Ժողովոյ տասներկու երեսփոխանաց ստորագրութեամբ ուղերձ մը պատրաստուելով՝ կ'մատուցուի ի ձեռն Պէրպէրեան Ռէթէոս Էֆէնտիի առ Ամեն. Մելքիսեդեկ Սրբազանն։ Սոյն ուղերձին իմաստն այս է թէ՝ 1885 Նոյեմբեր 1ին Մակար Սրբազանի քաջառողջական և պայմանաւոր ընդունելութեան դէմ խիստ բողոք բարձող երեսփոխաններն անդրդուելի մնացած են իրենց համոզման մէջ, թէ իբրև ճշմարիտ ժառանգորդ Ս. Լուսաւորչի Աթոռոյն կ'նկատեն միշտ Մուրատեանց Սրբազանն, որ արժա-

նի հանդիսացած է համայն ճշմարիտ հայկազանց սիրոյն, ինքը-դինքն նուիրած լինելով լիովին եկեղեցւոյ սպասաւորութեան՝ իբրև միշտ արդիւնաչատ, թէ նա հայ եկեղեցւոյ նոր նահատակութեան մ'անձնաւորութիւնն է, քանի որ Կաթողիկոս ընտրուելէ ետեւ միաձայն հաւանութեամբ Ազգին՝ հալածուած է և կ'հալածուի ի շնորհս օտար բռնասիրութեան՝ որու սպասարկած են ազիւտարար կամ աղդակերծան օտարասիրութեամբ դաս մ'ազգայիններ, որոց համար երկնից շնորհը կը խնդրեն։

Մուրատեանց Սրբազանը կը պատասխանէ։

Շնորհակալ եմ և միշտ շնորհակալ եղած եմ Կաթողիկոսական խնդրոյն մէջ եկեղեցւոյ իրաւանց գաւազանը պաշտպանող Երեսփոխան Տեարցդ կողմանէ առ իս ուղղեալ համակրելիր ուղերձներուն համար։ Սակայն գրաւորապես նոցա պատասխանած չլինելով, կը խնդրեմ որ չկարծուի թէ անտարբեր դանուած եմ նոցա մասին, քա՛ւ լիցի։ Այլ սա միմիայն այն նպատակաւ էր որ ևս առաւել չգրգռեմ հակառակորդներն ու տեղի չտամ ըսելու անոնց թէ ե՛ս եմ որ կ'առաջնորդեմ ձեզ ու կ'արծարծեմ ձեր աչերուժը, և այսպէս ձեր զգացուձերու լինքնաբեր անկեղծութիւնը կասկածի տակ ձգեմ։ Ելած են այնպիսիներ ալ որք խորհուրդ տուած են ինձ մերժել իսկ այդպիսի ուղերձներ, սիրոյ յայտարարութիւններ, բայց միթէ կարելի՞ է մերժել անկեղծ բացատրութիւնքն զգացմանց ազգասէր եկեղեցասէր հոգիներու, որք իրենց Եկեղեցւոյն իրաւունքը կը պաշտպանեն ու նոյն իսկ հակառակ այլոց հալածումներուն՝ կը շարունակեն իրենց պայքարը։ Ոմանք ևս յանդգնած են ըսել ինձ. «Ի՞նչ կարևորութիւն ունին այնպիսի անձանց ցոյցերն որք մեծ դիրք մը չունին ընկերութեան մէջ, բարձր դասուց չեն պատկանիր։» Բայց սրտիս բոլոր զայրութովը մերժած եմ նոցա այս անիրաւ և նկնախոհ դիտողութիւնքն, պատասխանելով թէ ինձ համար նոքա՛ են մեծ որք մեծ գաղափարաց, մեծ սկզբանց անձնուիրուիլ կարող են, որք մեծ քաներ կը խորհին և հոգւոյ արիութիւն ունին իրաւունք և արդարութիւն պաշտպանելու. Թո՛ղ այլք իրենց ուզած չափով չափեն մեծութիւնները. իմ չափս է բարոյական արժանիք, գաղափարաց բարձրութիւն, սրտի ուղղութիւն և անկեղծութիւն։»

Ուստի, շնորհակալ եմ Ձեզ, Տեարք Երեսփոխանք, անյողդողդ պաշտպանք ազգային եկեղեցւոյ իրաւանց, օրհնեալ լինիք միշտ և Աստուած բազմացնէ Հայ ազգին մէջ ձեզ նմաններ որ բարոյապէս ևս քան զևս բարձրանայ ու զարգանայ Ազգս Հայոց ու պայծառանայ Եկեղեցին Հայաստանեայց։

Ապա Պէրպէրեան Ռիֆէաս էֆէնտի կը խօսի այսպէս.

Վեհաշնորհ Սրբազան Տէր,

Որպէս ամանորեայ առթիւ փութացած էինք մեր ըզձից յայտարարութիւնն ուղղել Հոգևոր Տեառնդ, նոյնպէս խնդալից կ'ողջունեմք զայս օր,

որ նոր առիթ մը կ'ընծայէ մեզ կնկնելու առաջի բարձր Արքայնութեանդ մեր որդիական սիրոյ զգացումներու բացատրութիւնն, մանաւանդ դնելու յոտս Ձեր ղՀաւատաս այն խորին մեծարանաց զոր ամեն ճշմարիտ Հայ պարտի տածել սուրբ այն անձնաւորութիւնն որ ընդհանուր և ազատ հաճութեամբ Ազգին ընտրեցաւ ի բարձրագոյն Աթոռ Հայ Եկեղեցւոյ։

Ո՛չ միայն անձնական բարեկամութեան պարտք մը կը կատարենք այս օր՝ գալով շնորհաւորել Ձեր վեհ ու սիրելի անուան տօնն, այլ և ազգա-յին-եկեղեցական պարտականութիւն մը, ազգային Եկեղեցւոյ հաւատարմութեան ու անձնուիրութեան պարտաւորութիւն մը. վասն զի մինչդեռ Էջմիածնայ գահուն վրայ արդ կը բազմի իրողութեան կաթողիկոսը՝ բացառաբար ընկալեալ, Դուք էք իրաւանց կաթողիկոսը՝ օրինաւորապէս ընտրեալ. Նա Օրութեան ընտրեալը, Դուք՝ արդարութեան. Նա Օտարին նշանակածը, Դուք՝ Ազգին, Աստուծոյ կոչեցեալը, զի կը հաւատամք թէ ձայն բազմաց, ձայն է Աստուծոյ, ձայն յոր ապաւինած է միշտ ի սկզբանէ իւր ընտրութեանցն համար ազատական Եկեղեցին Հայաստանեայց։ Արդ ո՛չ ապաքէն, մինչ Ձօրութիւնը կը միջամտեր գործադրել օրէնք մը որ կը կապտէ Հայ Եկեղեցւոյ անկախութիւնն և որոյ դէմ բողոքած են Հայք յամէն ծագաց աշխարհի, և առ ոչինչ գրելով դարաւոր ինքնիշխան Եկեղեցւոյ մը կամաց յայտարարութիւնն՝ քամահած վաւերմամբ կուտար անոր գլուխ մը, և սա՝ աներկիւղ ի դատաւճռոյ ապագային՝ կը փութար գրաւել ի ձեռս նուիրական իրաւանց իւրեան ընծայեալ աթոռը, ո՛չ ապաքէն Դուք կը դառնայիք յայլ հարուածեալ թշնաւոր Եկեղեցւոյն առարկոյ մը մանաւոր պաշտումի, և ո՛չ ապաքէն ամեն ողջախոհ ազգասէր Հայ պարտէր նուիրել Ձեզ իւր սրտին մէջ աննիւթական անկապտելի գահ մը փոխան անոր յորմէ կը զրկուէիք, ուշըրջապատելով զՁեր անձն յարգանաց բացառիկ ցոյցերով՝ դէթ բարոյական արիւթիւն մը ցոյց տալ, գէթ բողբոջ մնալ առաջի բռնութեան սուրբ և բռնաբարման իւր իրաւանց։

Այս բողբոջը բարձունք մեք, իբրև ազգային երեսփոխան, ի սկզբանէ խնդրոյն, և կը շարունակեմք բառնալ. Նոյնը կ'ընեմք այսօր Ձեր անուան տօնի առիթ խմբովին ներկայանալով Ձեր Ամենապատուութեան։ Աւա՜ղ, պէտք չէ՞ր որ գունդագունդ հոս դիմէին այսօր Հայք, գէթ Հայք Թուրքիոյ որ կապրին ընդ հովանաւորութեամբ Օսմանեան կայսրութեան որ իւր հպատակաց խղճի ազատութեան ու եկեղեցական իրաւանց յարգող ու պահպանող գանուած է միշտ։ Ո՞ւր են այն չրթունք որք Արևելքէն Արեւմուտք, Հիւսիսէն Հարաւ միաբերան ողջունեցին դընտրութիւն Հայ-մագգային ժողովոյն. ո՞ւր են անոնք որք ջերմ շնորհաւորութեանց հեռագրեր ահագին դեղ մը կուտեցին Ձեր գրասեղանի վրայ։ Եկեղեցւոյ վճիռը բեկանող պատգամը յանկարծ լռեցուց զսոնոնք ու ցիրուցան ըրաւ. մեկէն իրենց լեզուն դարձուցին, մեկէն իրենց բուրվառին ուղղութիւնը փոխեցին. մեռցան իրենց ընտրեալը, քանի տուին օտարին հարկադրածին,—ո՛վ ծիծաղելի եղանակ քուէի իրաւունք ի գործ դնելու։ Կը սոսկամ ըսել, զոյգ կը շրջին որք կ'ամբաստանեն պաշտօնական շնորհաւորութեանց հեղինակներէ զսմանս՝ կանխաւ հաճած ու սատարած ըլլալ եկեղեցւոյ վճռոյն բեկման։ Կ'ազաչեմ ըսել, բազումք ձրի ոսոխներ իսկ դարձան Ձեզ և սկսան անհնոյ հայհոյել Ձեր կրկնապէս յարգելի ու սիրելի անձն, մատու-

ցանելով օտարին այնպիսի նուաստ գգացումներու նպատակ, որու գոյեցէ երբէք չէր սպասեր, չը յուսալով այնքանի անարգութեան, և որու վրայ սակայն կը հրճուի անտարակոյս։

Մեք իսկ, որք՝ յերեսփոխանաց ազգին՝ յամառութիւն ունինք հաւատարիմ մնալու արդարութեան և մեր եկեղեցական անկախութեան դաւոյն, մեք իսկ կը ծաղրուինք և կը հալածուինք, և մերթ սպառնալիք կ'ընդունինք ի պատասխանատուութիւնը բաւիրուելու. զի կուզէին որ ամենքին ընդհանուր բարոյական անկումի մէջ հարթուէին, զի կուզէին որ բոլորովին լքեալ առանձին մնար Ազգին ընտրեալ գլուխն, որ ո՛չ մի ձայն ելնէր և ամբաստաններ շահախնդիր օտարասիրութիւնն ու կոյր նախանձն որք նուիրական իրաւունքներ կը վաճառեն և հազուագիւտ արժանիքներ կը կոխոտեն անխիղճ։

Բայց, Սրբազան Հայր, մեք անգրդուելի կը մնանք և պիտի մնանք Ձեր շուրջն, արդարութեան շուրջն, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ անկախութեան խորանին շուրջն, մեր ազգային միութեան խորանին շուրջն. մինչ թոյլ կուտայ Աստուած որ ո՛չ մի բերան վկայէ ճշմարտութեան, ո՛չ, ո՛չ երբէք կատարեալ պիտի ըլլայ ուրախութիւնն մանուկներուն ու նուաստներուն, և մանր իսկ միամիտ ժողովրդեան՝ որ կրնայ պահ մ'որսացուիլ նոցա մեռելաբէր խրատներէն՝ կրնայ օր մը պակսիլ իրենց՝ երբ ճշմարտութեան լոյսը լուսաւորէ նորա խիղճը։ Ուրեմն ո՛չ միայն կանգուն կը մնանք բողբոջ ընդդէմ բռնաբարման իրաւանց մեր Եկեղեցւոյ, այլ և կը յուսամք տեսնել լուսադոյն օրեր նորա համար, այլ և կը յուսամք ըզՁեզ իսկ, արժանաւոր չքաղ եկեղեցականն, տեսնել մի օր այնպիսի դրից մէջ որ համեմատ լինի Ձեր բարձր արժանաւորութեան և որով Ազգն ստանայ ի Ձենջ այն բարիքներ զորս Ձեզ նման մեռեալ և արտի հալածագնեալ բարեմասնութեամբ զարդարեալ եկեղեցականէ մը միայն կրնայ ընդունիլ։ կը գոչեմք ապա «Կեցցէ՛ ընդ երկար ամս Վեհաշնորհն Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սրբազան Պուրատանց։»

Այս գեղեցիկ և իմաստալից բանախօսութենէ ետք՝ Ս. Փաշալեան էֆէնտին կ'պատասխանէ թէ՝ Պէրպէրեան էֆէնտիի ներկայք համամիտ են, բայց չընդունիր թէ սակաւաթիւ են բողբոջք, քանի որ կ'պտնուին հայ ժողովրդեան մէջ չատեր որ միշտ սրտովին կ'բողբոջեն եկեղեցւոյ կրած անիրաւութեան դէմ և պատէհ առթիւ պատրաստ են իրենց ձայնը բարձրացնել, թէ արդէն բողբոջ ձայներ կ'լսուին Կեսարիոյ դաւառէն, Գալատիայէն, ուր ժողովուրդը կ'մերժէ Մակար Սրբազանի յիշատակութիւնը, թէ Կարին, Ամեն. Մուրատեանց Սրբազանն ընտրելով Առաջնորդ, մտրճով կ'հաստատէ որ կ'յարգէ և կ'սիրէ Ազգընտիրը, թէ երբ Կաթողիկոսական խնդիրը յուզելու ժամը գայ, ժամ որ մօտալուտ է, ժողովուրդը պիտի կանգնի իր Կաթողիկոսական իրաւանց պաշտպան, պատրէ այն խաբէ-

ութեան քօղն որով դինք չրջապատած են գաս մ՝օտարամոլ մարդիկ, նա մանաւանդ այն պատճառաւ որ թէական ընդունելութեան պայմաններն անդորձադրելի մնացին և մինչև անգամ, ինչպէս պարտ էր, Նոյեմբեր 1ի նախի որոշման համեմատ՝ այդ պայմանները չծանուցուեցան տեղեկագրով մը Մակար Սրբազանին։

Ցետոյ խօսեցաւ Նչ[illegible]եան Ցակոբ էֆէնտին այսպէս։

Ամենապատիւ Սրբազան Հայր, թէպէտ ատ[illegible]ես միայն համ կարճեցի ու չէ մընդունած պաշտօն մը յանուն իմ քաղաքացեցս խօսելու, սակայն չեմ վարանիր ըսելու թէ ամենուն կարճեցիք զոհ և ուրախ պիտի լինին լսելով որ պատիւն ունեցած եմ իրրև կարնեցի՝ ներկայ լինելու Ձեր Սրբազնութեան տօնը շնորհաւորելու համար։ Իմ քաղաքիս ըրած ընտրութիւնը Ձեր անձէն շատ աւելի պատիւ կը բերէ իրեն՝ ցոյց տալով Ձեր բարձր արժանիքը գնահատելու կարողութիւնը։ Կարնեցին երջանիկ պիտի համարի զինքն եթէ Ձեր նարձր Սրբազնութիւն պատիւ ընէ ընդունիլ իւր ընտրութիւն. բայց եթէ պատճառներ ունենաք զրկելու զմեզ Ձեր հովուութենէն, կարին՝ ապահով կրնաք ըլլալ, մինչ պիտի մնայ զարմացող Ձեր անձին արժանաց, և իրը եկեղեցական իրաւանց հաւատարմութեան խօսք լինի՝ կ՝աղաչեմ որ չի մոռնաք զկարին։ Գալով սակաւութեան խօսքին, ես ալ այդ առթիւ կը յիշեմ Քրիստոսի խօսքն՝ տառաբին գանձանակին մէջ իւր լումային ձգող այրուդն նկատմամբ, թէ «Նա շատ աւելի ձգեց քան այլ շատեր ի միասին», վասն զի անկեղծ հաւատով տուաւ իւր նուէրքն։ Այսպէս ալ մեր զգացմանց նուէրներ անկեղծ են ու սրտագին, որով վստահ եմք թէ Ձեր Ամենապատուութեան առջև մեծ է նոցա արժէքն։

Նոյն միջոցին տեղւոյս ազգային վարչութենէ նամակ մը կը ստացուի, որով առ Մուրատեանց Սրբազանն Կ. Պոլսոյ ազգայնոց կողմէ եղած արժանաւորել ընդունելութեան համար յայտուկ շնորհակալութիւնն կ՝յայտնէր։ Ըստ առաջարկութեան փափազեան էֆէնտիի՝ երկու հեռագիր անմիջապէս կ՝ուղղուին միւն առ Վարչական մարմինն Ամիւնիոյ և միւսն առ Վաեմ։ Պալեօզեան էֆէնտի՝ վեց Երեսփոխանաց ստորագրութեամբ, որք են Ֆ. Ղազարոսեան, Ս. Փափազեան, Մ. Մէզպուրեան, Ո. Պէրպէրեան, Յ. Դուրգէն, Մ. Ալիքսանեան էֆէնտիներն, հեռագրեր՝ որով կ՝յայտարարեն իրենց անհուն շնորհակալիքն առ Մելքիսեդեկ Սրբազանն Ամիւնիոյ Վարչութեան, Ժողովրդեան և ի մասնաւորի Պալեօզեան էֆէնտիի կողմէ ցոյց արուած սիրալիր յարգանաց և վերհանձն ասպնջականութեան համար։

Գալուստ էֆէնտի Սերոբեանի՝ ի պատիւ Տ. Մելքիսեդեկ Սրբազանի ուսնամաքուեան՝ փառաւոր հացկերոյթ մը պատ-

թագուհի լինելով՝ սեղանի վրայ Պալեօղեանց և այլ անձերու կենաց համար, բաժակներ պարպուելէն ետք, Մելքիսեդեկ Սըրբազան հետևեալ խօսքերն արտասանեց։

Եղբարք, մեք Օսմանեան Հայքս միշտ բարեբախտ պարծիմք համարել զմեզ, որ կարծիմք ընդ հովանեաւ Օսմ. Կայսրութեան Գահուն, որ միշտ պաշտպանած ու պահպանած է իւր ամեն կարգի հպատակաց կրօնական անկախութիւնն ու եկեղեցական արտօնութիւնները, և ո՛չ միայն չէ արգելք եղած, այլ և նպաստած է նոցա յառաջադիմութեան. մանաւանդ մեր երախտապարտութիւն անհուն է այժմեան Օգոստ. Սուլթան Համիտ Բ. Կայսեր, որ ո՛չ միայն կը շարունակէ՝ ի մէջ այլ ժողովրդոց՝ Հայոց մասին ևս իւր նախնեաց արդարասէր ու հպատակասէր ընթացքն, այլ և անձնապէս լինելով տոգորուած ազնիւ ու մարդասիրական զգացմամբ, ունենալով փափուկ սիրտ ու մեծ հոգի, նորանոր իրաւունքներ ստացած է մեր և ամեն իւր հպատակաց խորին երախտագիտութեան վրայ։ Ապա կը մաղթեմ որ երկինք անսասան պահէ գինքն իւր Աթոռոյն վրայ և շնորհելով իրեն երկայն յաջողութեամբք լի օրեր, ընդ նմին և երջանիկ կացուցանէ ընդ նորա ձեռամբ զԱզգս Հայոց։

Ի վերջ՝ փիրզալէմեան Գեր. Ղևոնդ վարդապետ, Գեր. Փափազեան Աշոտ վարդապետ, Գեր. Կէօմրիւքճեան Մովսէս վարդապետ, Արժ. Տ. Կարապետ քահանայն և Մեծ Գուրդէն էֆէնտի պարագային յարմար բանախօսութիւնները ըրին։

Այս առթիւ արժան կ՚ուեմնենք նաև հրատարակել հետևեալ ուղերձն Ա. Աթոռ. Մուրատեանց Սրբազանն։

Ամենապատիւ Սրբազան Տէր.

Փաղջը և նուիրական պատասխանատուութիւն մը կատարել կը փութամ՝ զղջանալով ի սրտէ Ձեր բարի գալուստն ի Ն. Գօլիս, և մինգամայն շնորհաւորելով զարեդարձ Աչուան վեհիդ։

Սրբազան Հայր, ներկայ պատեհութիւնէն օգտուելով՝ իմ համեստ և անկեղծ ջանչացումս կ՚յայտնեմ Ձեր Ամենապատուութեան գերընտիր և վեհեմ հանդամանաց համար, որովք յաւէտ կը փայլիք, և շնորհիւ այդ ընտիր բարեմասնութեանց էր, որ ընտրեցաք հարազատ յաջորդ Սահակայ, Մեսրոպայ և Շնորհալւոյն և ազգընտիր Հայրապետ համազգական Ուրբանեն Տանն Թորգոմայ։

Սրբազան Հայր, Ձեր ի հանդէս ածած օրինակելի արժանեաց լուսեղէն շաւիղ մը կը գծէ ժամանակակից Ազգային պատմութեան խաւարին մէջ։ Օրհնեալ լինի ուրեմն Ձեր Անուն, և յաւէտ օրհնեալ այն վայրկեան, երբ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ մէջ իմ քուես տուի Ձեր բարձր արժանաց համար. այն օր ևեթ զգացի Ամենայոյս կարևորութիւնը, յորում ազատորէն կը կատարէի իմ նուիրական պարտքս առ սիրեցեալ Ազգն իմ, առանց իսկ մտքես փնդռելու թէ քանակեր կամ մը զոյս օրինաւոր ընտրու-

թիւն առաթառը պիտի եղծէը, և հանդէպ այդ ամարգար վճռային ջրիսառնեական խռովարհութեամբ խղճի և մտաց կատարեալ անդորրութիւն ցուցիք, ինչպես որ պարան էր Եկեղեցւոյ պաշտօնէին, զի չէք փառք առանց Աստուծոյ երկուղին։

Եւ սակայն Թուրքիոյ Հայոց Ազգային ժողովոյ և Հիւսիսային գումարեալ պատգամաւորաց համազգային ժողովին ի նպաստ՝ Ձեր բարձր Սերբաղնութեան տաչած հանդիսաւոր յաղթանակին յիշատակն դարուց ի դարս անջինջ պիտի մնայ, և Ձեր Անուն պիտի փառաւորուի յաւիտեան՝ ի փառս Ազգիս Սերեցելոյ։

Ուստի, Ամենապատիւ Տէր, իմ անկեղծ և որատգին բարեմաղթութիւններս վասն Ձեր արեշատութեան՝ դնելով յոտս Ձեր բարձր Սրբազնութեան՝

Աշեամ խորին յարգանօք և մեծարանօք Ազգային Երկոխոհան։

ՊՕՂՈՍ Ե. ԹՈՐԳՈՄԵԱՆ

1887

Եկեղեցական վիճակ։ — Պատմութեամբ և փորձով հաստատուած իրողութիւն մ'է թէ՝ հայ եկեղեցին հայ ազգութեան հաստատուն մի խարիսխն է, թէ հայ ազգութիւնը՝ բաց ի ազգային ղուտ տարրներէ, ղոր իր ընտանեկան կեանքէն, իր յատուկ պատմութենէ, գրականութենէ, լեզուէ ու օրէնքէն կ'քաղէ, չունի հզօրագոյն կապ մը քան ազգային եկեղեցին, որ իր էութեան հետ կապուած է, և որ իր այս հանգամանքն, նախկինս ահմանքն ու կազմակերպութիւնն անվթար պահելու զօրաւոր պատճառներ ունի։ Հայութիւնը իրօք չունի այնպիսի դիրք և հիմնարկութիւններ որ կարենան, իր էութեան հզօր նեցուկներ լինել և ազգային եկեղեցւոյ, եթէ ոչ գլխովին, մասամբ տեղը բռնելու։ Եւրոպական ազգաց ուրոյն օրէնք, սովորութիւնք, կառավարութիւն, նա մանաւանդ քաղաքացիութեան և հանրային համերաշխութեան իրաւունքներն կ'ներեն պատեհ ժամանա-

ին մինչև անգամ բաժնել աշխարհական և եկեղեցական չահերն իրարմէ, և բարձրագոյն իրաւանց և հիմնարկութեանց վրայ հաստատել աղգային էութեան հիմերն, սակայն այս բաժանումն ընդհանուր չընկնէր գատ, կան երկիրներ, Ֆրանսա, Անգլիա, Գերմանիա, Զուիցերի և այլն, որ թէև կ'պարունակեն տարակրօն և տարաստեղ ժողովուրդներ, սակայն մի և նոյն աղգային դրօշակին ներքև միանալ, նոյն օգին, նոյն նպատակին ու անձուկներըը տածել ու զարգանալու վիճակին մէջ կ'գտնուին, և հատատարապէս կ'վայելէն ինչ որ միահաղոյն աղգութիւն մը կրնայ տալ, ապահովութիւն, տևականութիւն և հաստատութիւն։

Ամեն կրօն, ո՛և է միջավայրի մէջ, մեծ դեր կատարած է և կ'կատարէ և ժողովրդոց ճակատագրին վրայ կ'զօրէ, հակառակ այն դրական և նիւթական վարդապետութեանց որով ազատ դրսիններ կ'ճգնին հրահանգել մարդիկն և կրօնային չրջանակէն դուրս հանել։ Ներկայ լուսաւոր գարուս մէջ անգամ օրէնսդիրն ու քաղաքագէտն, որքան աղատախոհ լինի, իր հաչիւն, իր ծրագիրը չկրնար որոշել առանց ի հաշիւ առնելու կրօնային ըզգայմունքն որ ամէպ կ'յուզեն և կ'փոթորկեն ժողովրդոց սիրտն ու կիրքն և որ հզօր գործակիներ են ընկերային բարեկրթութեան մէջ։

Եթէ ազատ եկեղեցի, ազատ պետութեան մէջ գազափար մէր երբեմն, որ ապա փորձի երթարկուեցաւ և ուր ուրիք գործադրութիւն, այլ չատ տեղ դիմադրութիւն գտաւ, պատճառն ոչ միայն ժողովրդոց մրտային վիճակն, այլ և կառավարական դրութիւնն է։ Շատ երկիրներ՝ իրրև երկնային հաստատութիւն նկատուած եկեղեցին, իրրև պատրուակ իւ գործ կ'դրուի քաղաքական նպատակներու համար։ Սակայն եթէ այս դիրքըն ունին կրօնային հիմնարկութիւններ առ հասարակ այն ժողովրդոց մէջ՝ ուր կրօնական պաշտօնն ու եկեղեցական օրէնսդրութիւն միայն կեղծաւորութեան և ձեւապաչտութեան առարկաներ դարձած են, չեն և պիտք

չէ որ լինին այդպէս Հայոց համար, որոց Եկեղեցին և ազգութիւնը սերտ առնչութիւն ունի ազգային եկեղեցին։ Պիտոյք մ'է այն Հայոց համար, որ իր աղբիւրն ունի ոչ միայն մարդկային սիրտին և դարաւոր նահատակութեան մէջ, այլ և հայ ազգութեան ստացած կազմակերպութեան և բացառիկ դրութեան մէջ։

Ապրդ՝ եթէ այսպէս տգէտ կամ լուսաւիտ ժողովրդոց համար եկեղեցին, ինչ ձև որ ունենայ, ուրիշ ընկերային և քաղաքական հիմնարկութեանց մի կարևոր մասը կը կազմէ, որքան և առաւել ազգային անկախ եկեղեցի մ'իր դիրքն անվթար պահելու կ'պարտաւորի այն ժողովրդեան մէջ, որ այդ ընկերական և քաղաքական առաւելութիւններէ զուրկ է։

Ապրդարև՝ այս համոզումը թէ եկեղեցի և ազգութիւն մեզի համար անջատ բաներ չեն, կ'սիրեր հայ ժողովրդեան մէջ, և եթէ ոչ հաստատուն պատճառաբանութեամբ, գէթ աւանդական սովորութեամբ կ'վարեր մեր ազգային գործերն, սակայն կարևոր է վնտռել թէ արտադրած է փափաքելի արդիւնքն և թէ արդեօք մի և նոյն զօրութիւնն ունի այսօր։

Ի բաց թողլով ժողովրդեան այն փոքրիկ մասն որմէ ոմանք բնաւ կրօն չունին, և այլք, ըստ եւրոպական տեսութեան, ազգութիւն և կրօն տարբեր բաներ նկատելով, այս տեսութիւնը հայոց բացառիկ վիճակին կ'ուզեն յարմարցնել և եկեղեցւոյն դէմն ամեն ազանգի, ամեն դաւանութեան, ամեն կրօնի համար բաց կ'հռչակեն, այս իրաւ է որ Հայաստանեայց Եկեղեցիէն ազգութիւնն անբաժան դաւանող հայոց մեծագոյն մասին համոզումը զօրաւոր էր, և այս համոզումն պատմական ժամանակաց մէջ իրրև հզօր լծակ հայութեան ճակատագրին վրայ ներգործած է, տեղ առ տեղ միայն քաղաքական և կրօնամոլական բուռն ազդեցութեանց տեղի տալով ազգութիւն և եկեղեցի իրարուստ մատնուած են։ Իսկ, մեր օրերն՝ երբ կրօնքի և խղճի ազատութիւն կ'վայելեն հայք անար-

գել, դժբաղդութիւն մ'է որ ազգային եկեղեցւոյ մեծ նշանակութիւնը տկարացած կ'երևի, հետևապէս և ազգութեան զգայումն։

Եւ ինչո՞ւ։ Այս տկարութեան թէ ներքին և թէ արտաքին պատճառները մի առ մի հետազօտելու տեղ, վիտաւենք միայն անոնց աւելիչ ներգործութեան դէմ մաքառելու սահմանուած իշխանութիւնն, որով անուշադակի բացատրած կ'լինինք նաև անոնց բնութիւնը։

Ա. հասարակ ամեն իշխանութիւն իր օրէնսդրական կազմակերպութիւնն ունի որու վրայ կ'հսկէ վարչային մարմին մը։ Եկեղեցական իշխանութիւնն ևս ունի իր կազմակերպութիւնն որու օրէնսդիրը թէև քրիստոնէութեան հիմնադիրն է և որու գործն հոգևներու հետ է, սակայն այս հիմնադրին հաստատած օրէնքն տարիներու ընթացքին, զանազան պարագայից, մարդկային այլազան ըմբռնումնց և կրից բերմամբ այնքան փոխուած և այլայլած է որ հաղիւ անոնց հետքն է մնացած։ Ընդհանրական ժողովներու որոշումներն երկնային պատգամներու տեղն են բռնած և կազմած են նորօրինակ իշխանութիւն մ'որ ունի կէս կրօնական և կէս աշխարհային պաշտօնէից մարմին մ'որ կ'կառավարէ եկեղեցին։ Թէ այս կառավարութիւնն ինչ աստիճան Աւետարանի ոգւոյն և դարուս յառաջդիմական ընթացքին հետ հաշտ է, արդէն հանրածանօթ իրողութիւն մը լինելուն, չենք ուզեր այս կէտին վրայ ծանրանալ։ Իրրև անուրանալի ճշմարտութիւն մ'ընդունուած է որ, ինչպէս հին, նոյնպէս նոր ազգաց մէջ կրօնական իշխանութիւններն ընդհանրապէս աւելի հակամէտ երևցած են բռնակալութեան և յետադիմութեան սատար և պաշկիչ դանուիլ քան թէ լուսաւորութեան և ազատութեան։ Արդ՝ կարող ենք սակայն պարծանօք ըսել, որ հայ Եկեղեցին ղերծ է այդ ամբաստանութենէ, վասն զի իր իրաւասական կազմակերպութիւնը նախնական եկեղեցւոյ պարզութեան և անկախութեան դրոշմը կ'կրէ, վասն զի աւետարանական ճշմարտութեան աւելի կ'մօտի, և անհատներու հոգւոյն հետ կապուած՝

Ազգէն կ'առնէ իր վարչային հեղինակութիւնը։ Ա,յս է պատճառն որ ամեն անիրաւութիւն, յարձակում և վտանգ եկեղեցւոյ դէմ՝ իբրև հայութեան դէմ թշնամանք կ'համարուէր, և հետևապէս եկեղեցւոյ և ազգային օրինաց վրայ յենած՝ հայ եկեղեցականն ու աշխարհականը թշնամանքը միակամ վանելու կ'դաշնակցէին։

Բայց մինչ այժմ այսպէս է. մինչ անոնք որ եկեղեցւոյ անմիջական և բնական պաշտպանները կ'կոչուին մի և նոյն ոգւով և եռանդով կ'պաշտպանեն ինչ որ իրօք նուիրական է, ինչ որ եկեղեցւոյ և Ազգին անկապտելի իրաւունքն է։ Ցաւ է յայտնել, որ այժմ եկեղեցի և եկեղեցական հակամարտ, գրեթէ անհաշտ դրութեան մէջ կ'գտնուին։ Ոչ եկեղեցականն իրապէս պատուիրակն է Հայաստանեայց Եկեղեցւոյ և ոչ եկեղեցին, անշուշտ պատուաւոր բացառութեամբ, կարող է ճանչել պաշտօնեաններ որ իր ոգւոյն, իր օրինաց ու կարգաց բոլորովին հակառակ կրթութիւն, վարմունք, վարդապետութիւն, կիրք ու պաշտօն ունին։ Եկեղեցին այլ, եկեղեցականն այլ նպատակ և ուղղութիւն կ'դաւանին։ Եկեղեցին կը պահանջէ անձնազոհողութիւն հօտին համար, բարոյական արիութիւն կենսական իրաւանց դէմ յարձակումներու համար, արդարասիրութիւն և ճշմարտասիրութիւն ժողովրդեան բարոյական դաստիարակութեան համար, իր ինքնօրինութեան և անկախութեան պաշտպանութիւն հոգևոր պաշտամանց և վարչային կազդատրութեանց միօրինակ և անթերի գործագրութեան համար, և առկայն հայ եկեղեցականներն ընդհանրապէս այս պահանջումներու դէմ ըմբոստ՝ ցուցամոլութեան, ձևապաշտութեան և մեքենական արարողութեանց մէջ հաւատ կը փնտռեն, իսկ իրենց ապիկարութիւնը, տգիտութիւնն և փառամոլութիւնը սրբողելու համար, կ'ամբաստանեն և կը դրպարտեն ամէն ժողովուրդն իբրև հեղինակ եկեղեցւոյ անչքութեան։ Պատմութիւնը տարուէ տարի կ'արձանագրէ հայ եկեղեցական, մանաւանդ բարձր դասուն արարմանց չնորհիւ Ազգին և եկեղեցւոյ կրած աղէտքն ու

չարիքն, տալուէ տարի ժամանակակից աղէտաբեր իրողութեանց վկայութեամբ կ'հաստատէ որ հայ եկեղեցական դասն ընդհանրապէս կ'անդիտէ իր կոչման վսեմութիւնն, իր մեծ պաշտօնին կարևորութիւնն ու պահանջմունքն, տակաւ առ տակաւ իր անկման կ'դիմէ և ժողովրդեան անտարբերութեան պատճառ կ'լինի, կարծես թէ իր միակ նպատակն է սքանչելի խնարհամտութեամբ հոգևորական կարգն ստանալէն ետև՝ յանդուգն մեծամտութեամբ իր ուխտն ու երդումն դրժել և կենաց վայելք, հարստութեան ճանքանները փնտռել, փառասիրական անձուկներ դոհ ընել, տերկամտութեան օրինակ, օտարամոլութեան քարոզ հանդիսանալ, անձնական նկատումներով քաղաքական խնդիրներու սահմանն արշաւել, երկպառակութիւն ու գժտութիւն գրգռել ժողովրդեան մէջ, և մինչև անդամ զրպարտութեան և դաւաճանութեան վատ դէնքերն ի գործ դնել, հալածելու արժանիք, տաղանդ, լոյս, օտարին ծախելու նուիրական իրաւունք և օրենք, երբ այդ ամենն իր թագուն վատասիրութեան և նախանձու նպատակներուն դէմ խոչընդոտներ հանեն, քրիստոնէութեան ճշմարիտ ոգւով, լուսաւորութեան ջահով, աղատ քարոզութեան համոզակեր հրահանգներով սրտաբին թշնամիներու և ներքին յիժերու դէմ մաքառելու տեղ, եկեղեցականութիւնը կ'թողու իր հօտն անպաշտպան՝ մարդորսներու ճիրանին ճարակ, անկարեկիր կ'գտնուի անոր վշտաց և տառապանաց, և միայն մեռելներու ոսկորտիքն, հին ու փտած ձևեր ու նախապաշարումներ պաշտպանելու համար կրօնական չանթերով կ'դինուի, չանթեր՝ որ այլևս չեն այլեր այլ միայն ծիծաղ կ'շարժեն։

Եւ այն ազգային եկեղեցին որ երբեմն իրաւամբ կը պարծենար իբրև խարիսխ հայութեան, պաշտպան լուսաւորութեան և յառաջդիմութեան, որ կ'մերժէր ամեն մինչնադարեան գաղափարներ, նուիրապետական միտումներ, և պաշտօն ունէր ժողովուրդը հրահանգել, ուղղել իր ազգային և կրօնական պարտաւորութեանց մէջ, այս-

օր իր աղդային նպատակին չեղնելով՝ կ'ընդունի օտարա-
մուտ ձևեր, արարողութիւններ, ծէսեր, կ'բռնանայ խիղ-
ճերու և մտայ վրայ, և իր նախկին պարզութենէ և սահ-
մանադրական դրութենէ մերկանալով՝ կ'համակերպի,
ի շնորհս իր եկեղեցականութեան, այնպիսի օրինաց, սկզ-
բանց և հրամաններու որ կ'պատկերեն մեզի արևմտեան
կղերին միապետական կազմադրութիւնները և կ'յիշեց-
նեն հին բիւզանդեան կրօնաւորներու չարաչար օրերը։

Եւ երբ այսպիսի ողբալի կացութեան մը մեջ կ'դըտ-
նուի հայ եկեղեցականութիւնն, ինչու զարմանալ, եթէ
հայ ժողովուրդը պանդխտութեան և ստեպ դունդա-
դունդ օտարին ծոցը կ'դիմէ, իր բարոյական և նիւթա-
կան աղէտից դարմանը մը դտնելու յուսով, եթէ առաջ-
նորդական չատ վիճակներ անհոգիս և անխնամ կ'մնան,
եթէ վանորայք կ'կործանին, ազգային կալուածները
մասնաւոր անձերու ձեռքը կ'անցնին, եթէ միաբանական
ուխտեր անմիաբանութեան կ'մատնուին, եթէկարգ մը
արդարասէր և եկեղեցասէր հովիւներ չարունակ կ'զըր-
պարտուին և հրապարակաւ կ'հալածուին, եթէ եկեղեցի
նեըը թափուր և զանազան ազգային հիմնարկութիւններ
առանց կենաց եթէ ազգային նուիրական իրաւունքներ ու
չահեր կ'վաճառուին, պատրիարքական աթոռներն իրենց
հեղինակութենէն և Ազարաստան գահն իր ինքնօրինու-
թենէն խափան կ'գրկուին, և եթէ, վերջապէս, հայ Ազգն՝
իբրև իր թշուառութեան հեղինակ նկատելով այն կրօ-
նական իշխանութիւնն որմէ հեռացած է ճշմարիտ քըր-
իստոնէութեան հոգին, կ'հեռանայ և ինքն այն եկեղե-
ցիէն՝ որու մէջ կ'յուսար գտնել իր վերակենդանու-
թեան և փրկութեան ապաստանը։

Այսպէս, ուրեմն, ինչ որ անբաժանելի էին, հայ եկե-
ղեցին և եկեղեցական, հետզհետէ իրարմէ կ'բաժնուին։
Մին ամայի, միւսն անտարբեր, և ժողովուրդն, ըստ երև
ոյթին, ոչ մին ինքնօրէնն պաշտպանելու և ոչ միւսն ըզ-
գաստութեան բերելու կարող, կ'ստիպուի այլուր փնտը-
ռել ինչ որ ոմանց՝ արդի գիտութիւնն, այլոց քաղաքա-

կրթութիւնն, և յատերունն՝ չերմեռանդութիւնը, կրնան հայթայթել լոյս, հայրենասիրական զգացմունք և երկնային սիրոյ անձնական, մինչդեռ հայ եկեղեցին՝ իբրև սիրող մըտային և բարոյական զարդացման, եթէ պաշտպանուէր ինչպէս որ հարկ էր, կարող էր գոհ ընել ամենէ ազատախոհ միտքն ու ամենէ հայրենասէնչ և չերմեռանդ հոգին, և Ազգն առաջնորդել վերաշինութեան և քաղաքակրթութեան ճամբուն մէջ։

(Շարունակելի)

ՎԱՐԶԱՊԻՆ ՎԻՃԱԿ

Սահմանադրութեան հաստատութենէ ի վեր պատահած են իրողութիւններ որ վեր ի վայր ջրջած են վարչութիւններ, վրդոված են մայրաքաղաքի հայ ժողովրդեան սիրտն, ժողովները տագնապի և ազգային իրաւունքներ վտանգի մէջ ձգած են, սակայն երբէք տեսնուած չէր ազգային այնպիսի անկերպարան և անիշխանական վիճակ մ՚որ ժամանակէ մ՚ի վեր կ՚ապրէր թէ կեդրոնին և թէ համայն Ազգին մէջ։ Սահմանադրական բազմաժեայ շրջանին մէջ տեղի ունեցած են ազգային օրինաց դէմ յարձակումներ, ամիրայական ոտնձգութիւններ, վարչային պատուհասներ, կուսակցական թուաձն պայքարներ, Ազգային Պատրիարքարանի փակումն, պատրիարքաց անկումներ, կրօնական և քաղաքական ժողովներու ընդհարումներ՝ իբրեւ ասկան խընդիրներու մասին, դաւառական հարստահարութեանց և այլ հարցերու նկատմամբ յարաբերական անհամաձայնութիւններ, բայց այդ ամեն ազգային դէպքերն մեզի իր ուղղին կ՚գտնէր նպատակ մ՚որ՝ եթէ երբեմն անորոշ, երբեմն անխոհական, միշտ հանրային օգտին դրօշմն ունէր։ կ՚գտնէր ժողովրդեան սրտին ու մտքին մէջ իանդ ազգային, սէր ճշմարտութեան՝ որ կարծեաց ազատ բախտին յառաջ կ՚գար, և որ կենսականութեան գլխաւոր արտայայտութիւնն էր։ Ինքնին չիար հակազգային անպատկառ քաղաքականութիւն։ Եթէ վարչային մարմիններ ազգային ուղղութեան փոխանակ՝ օտարոտի ազդեցութեանց են-

թակայ գտնուէին, իսկոյն թէ օրագրութեան և թէ ժողովնե-
րու մէջ հայրենասէր գրիչներ, վեհանձն ձայներ բողոք կ'բառ-
նային և արդարութեան ու իրաւանց սահմանէն դուրս նկատ-
ուած չեղումներ և անօրէնութիւններ խստիւ կ'քննադատէին
ու կ'դատապարտէին, մինչդեռ ժողովուրդն ինքնաբերաբար
այժ կ'տար արդարութեան ձայնին և ժողով ու վարչութիւն
դէմ կ'զգուշանային վտանգելէ իրենց արժանապատուութիւնն
ու բարոյական իշխանութիւնը։

Այդ՝ ժողովրդեան և իր ժողովներու մէջ, հայ մամլոյ և
հասարակաց կարծեաց մէջ՝ կենսական չահուց նկատմամբ, այդ
համերաչխութիւնը բաւական տարիներէ ի վեր դոյութիւն չու-
նի։ Այնպէս կ'թուի որ Ազգային Պատրիարքարան, ժողով,
վարչութիւն և ժողովուրդ ուրոյն ուրոյն մարմիններ են, զատ
զատ նպատակներու և չահուց ծառայող, ունենալով իրենց
օրագրական գործիներն, որ իրարու լեզու չեն հասկնար, մին
միւն նոյն ոգին, նոյն ճշմարտասիրութիւնը չունի։ Այս ընդ հա-
կառակ չփոթ դրութենէ ծագած էր մտաց և խիղճերու մէջ ան-
հանգստութիւն մը, իրաց ձախող վիճակին պատճառները հե-
տազօտելու և դարման մը գտնելու փափաք մը։ Սակայն երբ
մէկ կողմէ լրջամիտ անձինք կ'նշմարէին բնապատճառն ու դե-
ղըն և անլսելի կ'մնային, չատեր կ'ցաւէին, կ'ոգբային և միա-
կողմանի գնահատութեան, ազատրատի աղէտութեան, օրագ-
րական ստապատիր թևշադրութենէն հաւատ ընծայելու հակա-
մէտ, դահավէժ վէիռներ կ'աջճակէին, մինչդեռ ուղիղ դատո-
ղութիւնն ու օրինաւորութիւնը կ'պահանջէին որ ժողովուրդն
եկեղեցական և ահմանադրական օրինաց և հայութեան մե-
ծագոյն չահուց տեսակէտով համազում մը գոյացնէր և ապա
գատէր ու գործէր։

Թողունք անցելոյն մէջ տեղի ունեցած տզրտնդեմ տնօրէ-
նութիւններ, որ տարբեր ձևերով ցարդ կ'չարունակուին, և ամ-
փոփենք մեր ուշադրութիւնն այն պատճառներուն վրայ որ կը-
վերադրուին ազգային վերջին անցից։

Անոնք որ սովոր չեն ազգային արդի կացութեան ներքին ու
հեռաւոր պատճառներն հետազօտել, կ'ըսեն — Այժեն. Ս. Պատ-
րիարքի հրաժարականին հետևանքն է իրաց այս տխուր վիճակն,
հրաժարական՝ որ անհրաժեշտ դարձած էր առանձնաշնորհ-
մանց սպառնացող վտանգէն, գաղտնուգողի մատնութենէն,
Ազգ. Պատրիարքարանի դէմ տեսնուած ըմբոստ չարժուձևերէ,

նորընտիր Քաղաքական ժողովին անհաստատութենէ։ — Ըստ մեզ՝ եթէ չրջենք այդ պատճառներն ճշմարտութեան կ'մօտենանք, իսկ եթէ աւելի ևս ճչտել ուզենք քան պարճառ պիտի ըսենք։ — Գանի որ՝ ժամանակէ մ'ի վեր, Ազգ. Պարիարքարանն երկայրի քաղաքականութեան մը կ'հետևէր, այնպէս որ ստէպ իր իշխանութիւնն մերթ մէկ և մերթ միւս սայրին առջև նեզն ընկած կ'գտնուէր, քանի որ նախորդ վարչային մարմիններն, նա մանաւանդ մեր Սրբազումար ժողովն՝ ուղիղ և արդար յատակագիծ մը չունէր և եկեղեցական օրէնք, ազգային ընդհանրութեան օգտին գաղափարն իսկ իրաց վանելով, պատ ի պատ կ'չարժէր, անձնական տպաւորութեանց, պատահական, անխորհուրդ թելադրութեանց, նախանձու և վատամոլական նըկատմանց բերմամբ կ'վարէր պաշտօն մը, բնականապէս պիտի գըրէր անել ճամբու մը մէջ՝ ուստի հազիւ կարող եղաւ ելնել՝ չնորհիւ բանիբուն և խոհական գլուխներու, որ իրեն օգնութեան հասան։

Վեհապետեան Սրբազանի հրաժարման պատճառն, արդէն յայտնի եղաւ, ոչ առանձնաշնորհմանց խնդիրն էր, ոչ Զուլիչ Տիգրանի խնդիրն, որ կրնային առանձին բանակցութեամբ կարգադրուիլ, եթէ տեղի կար, ոչ Քաղաքական ժողովին վաւերացման խնդիրն էր, այլ Ամեն. Մուրատեանց Սրբազանի պաշտօնանկութեան խնդիրն էր, էջմիածնէն եկած հրամանի մը համեմատ, հալածանքն, այդ բարբարոսութեան եկեղեցականին դէմ մղելու անգուսպ փափաքն էր։ Նոյն վիճակի մէջ են առանձնաշնորհմանց և այլ խնդիրներ, ինչ որ էին Ամեն. Վեհապետեան Սրբազանի հրաժարումէն առաջ, և սակայն Վեհապետեան Սրբազան, իր գահն ելաւ անհրաւէր, վասն զի Մուրատեանց Սրբազան իր առաջնորդական ամիսէն իջաւ յօժարակամ, և հիմակ կ'փորձուի՝ Զմիւռնիոյ հասարակութիւնն երկպառակութեան մատնելէն ետև՝ Շահպաղեանն Մանիսայէն հեռացնել։

Եւ այս ամեն երկդիմի, ազգային իշխանութեան պատուոյն արատաբեր և բարոյական աղետութեան նուաստացուցիչ դարձուածոց մէջ, ո՞վ չտեսներ որ Կաթողիկոսական իրաւանց խնդիրն է որ կ'հալածուի, որ առաջնորդական, գաւառական, պատրիարքական և սահմանադրական չահերն են որ կ'զոհուին էջմիածնի բացառաբար հաստատուած դահակալին, որ պաշտօնական յարաբերութեանց ներդաշնակութիւն, հայ ժողովրդ-

եան անդորրութիւնն ու զարգացումն, կրթական, եկմտական և եկեղեցական բարեկարգութիւն, ազգային ամէն իրաւունք և շահերն են որ կ'առորդասուին միակ նպատակի մը, այս է հաստատութեան գոյն տալու Կաթողիկոսի մը գոր, ասկայն, Ազգ. ժողովն իրրև քաղաքական հոչակեց, և որ, Ռուսական իշխանութեան հաճելի երեւելու համար, յամանց նախընտրական կաթողիկոս կ'համբաւուի:

Եթէ Ա.ժին. Վեհապետեան չչտապէր վերաթազմիլ իր Աթոռը, գժգոհութեան նորագոյն չարժուններ պիտի ցոյց տային որ վերջապէս հայ ժողովուրդն աչքը բանալով կ'ընդնշմարէր ճշմարտութիւնը: Բայց ինչու այդքան չտապ. ինչ անցաւ յանկարծ իր անդառնալի հրաժարականին և յԱթոռն անհրաւիրելի վերադարձին մէջ: Ճիշտ ինչ որ սկսած էր զգալ առ հասարակ ժողովուրդն, Վեհապետեան Սրբազանին զգացուց՝ իր ազատասթսութեամբն ու հեռատեսութեամբն անուանի՝ նորակազմ Քաղաքական ժողովին վսեմ. Ատենապետն, որ՝ իր նախորդին աննման, իրաց վիճակը քաջ կ'ըմբռնէր և առ Ս. Պատրիարքն մանկլաւիկի պաշտօն վարել չդիտէր, զգացուց կ'ըսենք, թէ Ն. Սրբազնութիւնն յոռի չրջանի մը մէջ կ'գտնուի, թէ մոլորական և կասկածելի քաղաքականութեան մը հետևանքն է պաշտօնակեան յարաբերութեանց ցրտութիւնն, ուստի և ազգային գործոց տխուր կացութիւնն, թէ մանաւանդ Կաթողիկոսական և Պէչիկթաշի դերեզմանական խնդիրներու առթիւ՝ սրբազումար ժողովին, ի սկզբանէ ռնտի, բռնած հակազգային և անքազաքագիտական ընթացքն անվստահութեան և ծանր կասկածներու տեղի տուած է պաշտօնական բարձր չրջաններու մէջ, թէ անհրաժեշտ է ազգային պարզ և անկեղծ ուղղութեան մը դառնալ և կատարել ինչ որ կ'պահանջուի բարձրադոյն հրամանի մը համեմատ, և թէ միայն այս պայմանաւ կարելի է վերահաստատել ժողովներն և վստահութիւնը: Եւ Վեհապետեան Սրբազանն, որ գիտէ ելնելէն ի վեր առաջին անգամ ճշմարտութեան ձայնն, ճշմարիտ քաղաքագիտի և ազդեցիկ անձնաւորութեան մը կոչվէ, նոյն ինք՝ Վսեմ. Սիմեոն պէյ Մազաուտեանի բերնով կ'լսէր, կ'ուշարրի, կ'զարհուրի և իսկոյն կ'կատարէ ինչ որ կ'առաջարկուի, այս է յատուկ գրով պատասխանել Արդարութեան Բարձր. Պաշտօնէին հարցման և կրկնել իր հրաժարականն:

Եւ իրաւի՝ այս գիրը գրուելէն ետև՝ նորակազմ Քաղաքական ժողովոյ վաւերացման հրամանագիրը կ'հասնէր ի Պատրի-

արքարան, վարչային մարմիններն Դեկտեմբեր 28ին նիստ կազմելու կ'հրաւիրուէին, և Ամեն. Ս. Պատրիարքն, առանց սպասելու իր պատճառաբանեալ հրաժարականի պատասխանին, և նկատելով անչուշտ որ իր նպատակին հասած է Մուրատեանց Սըբազանի հրաժարմամբ, Կաղանդի օրն կ'իջնէ Եկեղեցի, քարոզ կ'տայ և ապա անձնուիրաբար կ'երթայ կ'բազմի պատրիարքական Աթոռն, մինչդեռ ժողովրդեան մեծագոյն մասն այս կարծիքն ունէր որ վերջապէս Նորին Սրբազնութիւնը պիտի երթար բազմէր Ս. Յակոբայ առաքելական Աթոռն, բայց ժողովուրդը կ'մոռնար որ, ըստ որոշման Նախորդ Վարչութեան, Ս. Պատրիարքն ունէր առաջին կէս-տարի ձեռնթ ազգային գործեր, որոց կարգէն է նաև Գեր. Շահպազեանի գործը։

Ահա այնուհետև իրարու կ'յաջորդեն պատրիարքական չրջաբերականներ առ ժողովուրդն, ի մասին անանուն թերթի մը բարբառնջմանց, առ գաւառական Առաջնորդս՝ յորդորելով որ առ մեր վեհանձն և լուսամիտ Վեհապետ, Վեհափառ Սուլթանն՝ հայ ժողովրդեան տածած դարաւոր և անկեղծ հաւատարմութեան զգացմունքն արծարծեն, և այլ միջոցներ ի գործ կըղրուին անխորհուրդ քաղաքականութենէ և անդառնալի հրաժարականներէ յառաջ եկած տխուր տպաւորութիւններն և կասկածները փարատել։

Եւ սակայն Նորակազմ Քաղաքական ժողովը և հին Կրօնական ժողովը պիտի կարենային արդեօք հաստատելի այն գործերու մասին՝ որ խառն ժողովոյ իրաւասութեան կ'պատկանին, պիտի լուծեն վերջապէս հաշտարար ոգւով այնպիսի խնդիրներ որոց նկատմամբ, սակայն, իրարմէ տարբեր կարծիք կ'դաւանին։ Ահա նոր խնդիր մ'որ ուշադրութեան կարօտ է և որ կըրնայ լուծուելու աւել լուծել ժողովներն։ Սակայն մենք վստահ ենք Նորակազմ Քաղաքական ժողովին իմաստութեան վրայ, և այս հանգուցմն ունինք՝ որ Քաղաքականն՝ Կրօնականին վճռաբիրական և չանթասիրական հակումները զսպելով՝ ազգային քաղաքականութեան նոր թուական մը պիտի բանայ, հիմնական, հանրօգուտ և որոշ ծրագրի մը համեմատ, կենսական խնդիրները պիտի լուծէ, կորսուած իրաւունքներ պիտի վերահաստատէ և Ազգային Պատրիարքարանի հեղինակութիւնը վերականգնելու համար իր ենթրէնութեանց հիմ պիտի դնէ արդարութիւնը։

ՎԵՐՋԻՆ ՆՇԱՆԱԻՈՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ Ի ՄԱՂՆԻՍԱ*

Խմբագիր Ցէր,

Ցաճախ տեսնուած է որ մեր Ազգային Պատրիարքարան, չըգիտենք ինչ տարօրինակ ուղղութեան հետեւելով՝ ինքնին կը վրդովէ շատ մը գաւառներու անդորրութիւնն, մինչդեռ պարտական է իւր հաղորդութեան պահպանելու վերագոյն հսկողութեամբ միակ պարտաւորութիւն պարտ էր ունենալ։

Այս կարգի գաւառներէն է գլխաւորաբար և Մաղնիսան, որոյ խաղաղութիւնն երկու տարիէ ի վեր խանգարուած է դըժբաղդարար Պատրիարքարանի կողմանէ։ Շահպազլեան վարդապետին ի Մաղնիսա գալն այժմ չորրորդ տարին է. իւր գալըստեենէն մինչև ցայժմ սիրած է իւր հօտն և նորա բարօրութեան համար աշխատած, և փոխադարձաբար սիրուած և յարգուած է իւր հօտէն վերջին աստիճան (անշուշտ բացառութիւն են և նշանակութիւն չեն ունենար 8—10 հակառակորդք, զորս անկարելի է չունենայ մէն մի եկեղեցական եւր ուրեք որ գտնուի)։

Շահպազլեան վարդապետեան երկու տարի առաջ յօդուած մը գրեց այժմեան գահակալի ապօրէն կաթողիկոսութեան դէմ, և ահա այն օրէն ի վեր Ազգ. Պատրիարքարան կ'ուզէ ի Կ. Պոլիս տանիլ Մաղնիսայի քարոզիչն. յայտնի է որ քանիցս փորձեց

* Արդարութիւնը պարտ կ'դնէ խմբագրութեանս վրայ հրատարակել այս յօդուածն՝ որ ճշդիւ նկարագիրն է Մաղնիսայի վերջին անցից։ Կրօնական ժողովն, ըստ երեւոյթին, մտադիր է շարունակել ընթացք մ'որ յետին ծայր ընաստեր է Մաղնիսայի ժողովրդեան շահուց և իրաւանց հակառակ։ Գիր. Շահպազլեան վարդապետ՝ ըստ իւր խոստման, հրաժարակեաը տուած և Պոլիս գնալու պատրաստ է, բայց ժողովուրդն չ'թողուր։ Ազգ. Պատրիարքարանի, և յատկապէս կրօնական ժողովին կ'մնայ այժմ մաքառիլ ամբողջ ժողովրդեան մը կամաց դէմ և բռնադրել եկեղեցական մը պաշտպանողական յօդուածի մը համար . . . ։ Շշմարիտը՝ խոհեմութեան գործ մ'ըրած կ'լինի մեր Հոգեւոր Իշխանութիւնն եթէ չգրգռէ վերստին այդ խնդիրն և թողու որ Շահպազլեան վարդապետ իր արգիւնաւոր պաշտօնը շարունակէ։

Ե. Խ.

իւր այս դիտաւորութիւն ի գործ դնել Զմիւռնիոյ Առաջնորդ Ամեն. Մուրատեանց Սրբազանի ձեռօք, որմէ սակայն պատասխան ստացաւ թէ ինքը չուզէր միջամտել Կամուղիկոսական խնդրոյն, և թէ Պատրիարքարանը կարող է ուղղակի կոչել յիշեալ վարդապետը։

Սակայն չդադրեցաւ Պատրիարքարան իւր պայքարն ընդդէմ Շահպաղլեանի՝ ունենալով հանդերձ դուն և ներքին նպաստակ մը, յաղթահարել սոյն խնդրոյն մէջ խիստ երևելի նկեղեցական մը, և այնու վրդովել նաև Զմիւռնիոյ միհամն. ուստի մատոյց իւր ընթերին առ Բարձրագոյն Դուռն զՇահպաղլեան ի Կ. Պոլիս տանելու համար։

Սոյն թագրիրովն յանիրաւի ամբաստանուած էր նաև ըզՄիւռնիոյ Առաջնորդն՝ իբրև անօտաստող պատրիարքական հրամանաց։ Բայց արդարութիւնը կ'պահանջէր որ անգործադրելի մնայ Պատրիարքարանի այս պահանջումն, և մնաց։ Ահա այս միջոցներ՝ տեղի կ'ունենայ պատրիարքական հրաժարումն, որոյ պատճառներէն մինն էր Շահպաղլեանի խնդիրն։ Սակաւ ժամանակէն յետոյ՝ դարձեալ ի չնորհս Պատրիարքարանի ներքին դիտաւորութեան՝ յուզմունք և չփոթութիւնք կ'ծագին ի ըզՄիւռնիա մասնաւորաց կողմանէ, որով և տեղի կ'ունենայ Ամեն. Տ. Մելքիսեդեկ Սրբազանի անդրդուելի հրաժարումն, որ և ի խոր կ'խոցէ Զմիւռնիոյ և իւր թեմարէից ողջամիտ հասարակութեան սիրտն ու հոգին։

Այս ամենն համառօտակի յիշատակելէն ետև՝ դառնամք այժմ մի և նոյն համառօտութեամբ պատմել Պատրիարքարանի մի նոր անօրէնութիւն դարձեալ ի մասին Շահպաղլեանի խնդրոյն, որով և տեղի ունեցաւ Մաղնիսայի ժողովրդական նշանաւոր չարժումն։

Ներկայ տարւոյս Փետրուարի սկիզբներն մեր Ազգ. Պատրիարքարանն գինք ստիպողականութեան մէջ կ'դնէ վերստին յարուցանել Շահպաղլեանի խնդիրն. սակայն այս անգամ յոտի չրջան մ'ընելով բարձրագոյն Ատեաններէ կ'վերադառնայ դարձեալ Զմիւռնիոյ Առաջնորդարանի միջոցաւ կոչել զՇահպաղլեան ի Կ. Պոլիս, անչուշտ այն անհեռատես ակնկալութեամբ և յուսով թէ՝ Զմիւռնիոյ Սրբազան Առաջնորդն հրաժարած և հեռացած լինելով՝ որ և է դժուարութիւն բարձած կ'լինի ի մասին Շահպաղլեանի խնդրոյն։ Ցաւալի յուսախաբութիւն, Քանզի Շահպաղլեանի ի Կ Պոլիս երթալու արգելքն ոչ թէ ըզ-

միւռնիոյ Առաջնորդ Այծն. Մուրատեանց Սրբազանն էր, որ միշտ չէզոք դիրք մը պահեց սոյն խնդրոյն մէջ, այլ Մաղնիսայի բարեպաշտ ժողովուրդն, որ և երբէք չէր ուզեր և այժմ իսկ՝ ամեն զոհողութիւն յանձն առնելով, չուզեր բաժնուիլ իւր սիրելի քարոզչէն, ինչպէս պիտի տեսնուի քիչ մը վերջ։

Զատիկարքարանի սոյն վերջի հրամանն Զմիւռնիոյ Առաջնորդ Ցեղապահի միջոցաւ կ'հասնի առ Շահպազեան վարդապետն, որ իսկոյն կ'մատուցանէ իւր հրաժարականն առ Թաղական Խորհուրդն և ըստ այնմ կ'տեղեկագրէ Զմիւռնիոյ Կրօնական Ժողովին։ Սակայն Թաղական Խորհուրդն ամենայն իրաւամբ կ'վարանի, կ'տատնապի և չուզեր ընդունիլ սոյն հրաժարականն, անշուշտ տեսնելով թէ՝ ժողովուրդն որ աստիճանէ սիրուհեամբ կապուած է իւր հովուին հետ։ Հետևեալ կիրակէն Շահպազեան վարդապետ մի ժամու չափ խիստ սրտաշարժ կերպով խօսեցաւ իւր վերջի քարոզն և հրաժեշտի ողջոյնն։ ըստ աւուր պատշաճի Աւետարանական քարոզութեամբ յորդորեց ղժողովուրդ անրաժան մնալ ամեն բարի և առաքինական գործքերէ, որուն միջոցաւ միայն կարող է մարդ ժառանգորդ լինել երկնային բարութեան։ Ապա ջերմ բարեմաղթութիւն և աղօթքներ ըրաւ վասն բարեբաստութեան և անգին կենաց երկարութեան մեր առաքելապետ և հայրապետով Վեհ. Սուլթանին։ Ինչպէս ուրիշ անդամներ նոյնպէս և այսօր կրկին և կրկին յանձնարարեց ժողովրդեան, որ կենաց և մահու չափ անբաժանելի կապուին Օսմանեան մեծազօր Տէրութեան և նորա Վեհափառ Սուլթանին կենաց։ Քարոզիչ Ս. Հայրը կրկնեց թէ, դարերու փորձառութեամբ և պատմական իրողութեամբք ապացուցուած ճշմարտութիւն մ'է, որ Հայոց ազգ իւր եկեղեցական և ազգային ամեն նուիրական իրաւունքներով կրնայ պահպանուիլ և յարատևել առաւելապէս Օսմանեան մեծազօր Տէրութեան Սուլթաններու հովանւոյն ներքև քան և է քրիստոնեայ Տէրութեան։ Երբ աւարտեցաւ սոյն բարեմաղթութիւնը, բոլոր ժողովուրդ միաբերան աղաղակեց — Աստուած հատատատ և անսասան պահէ Օսմանեան Սուլթանաց մեծազօր Տէրութիւնը։ Իսկ երբ կարգն եկաւ, որ Քարոզիչ իւր խորին շնորհակալութիւն կ'յայտներ և իւր հրաժեշտի ողջոյն և օրհնութիւն կ'մատուցաներ, ահա յայնժամ ամենքն միաբերան, մեծ ու փոքր, արք և կանայք աղաղակեցին. — Ձեմք ընդունիր, Հայր Սուրբ, բնաւ չենք ընդունիր հրաժեշտդ և երթալդ։ Ս. Առա-

նարանն հակիւ կարողացաւ լռեցնել և հանդարտեցնել ժո՛ղովուրդ և չարունակելով իւր օրհնութիւնը վերջացնել։

Մաղնիսայի ժողովուրդն արդարև վերջի աստիճան յուզուեցաւ երբ տեսաւ թէ Պատրիարքարան բռնի կերպով բաժնել կ՛ուզէ ղիրենք այնպիսի վարդապետէ մ՛որոյ արդիւնաւոր գործառնութեանց երեք տարիէ ի վեր ականատես է մանաւանդ իւր երկսեռ մանկանց կրթութեան մասին։ Ուստի իւր այս իրաւացի յուզմունքն իրականի և գործնականի դարձուց. յետ եկեղեցական արարողութեան մօտ 400 ժողովուրդ իսկոյն Թաղականաց ղիմեցին և յայտնեցին որ իրենք բնաւ պիտի չհողուն ղՇահապաղեան, և մինչև իսկ, եթէ հարկ լինի, ի Բարձրագոյն Դուռն ևս ղիմելու պատրաստ են։ Թաղականք՝ իբրև պաշտօնական մարմին՝ բաւականին ջանացին համոզել ժողովուրդ հնազանդիլ պատրիարքական հրամանին։ Սակայն իսպառ ընդունայն եղաւ ամեն ջանադրութիւն և մինչև իսկ անելանելի դրութեան մէջ տեսաւ իր պաշտօնական կացութիւնը. քանզի երբ այդ հարիւրաւոր ժողովուրդ տեսաւ Թաղականաց ընդդիմութիւնն, յայնժամ սկսաւ Եկեղեցւոյ գանդակներ հնչեցնել ընդ երկար, որով անթիւ ժողովուրդ լեցուեցաւ Եկեղեցւոյ չրջապատ բակերու մէջ, արք և կանայք՝ որոց աղաղակն էր սա խօսքերն միայն. — Անկարելի է որ մենք բաժնուինք Շահապաղեան վարդապետէն»։ Հուսկ ուրեմն արանց և կանանց կողմէ պատրաստուած հանրագիրներ Թաղականաց կողմէ վաւերացուելով՝ իրկուեցան ի Պատրիարքարան, ի Զմիւռնիա առ Կրօնական ժողովն, առ Կառավարիչն քաղքիս, առ Կուսակալն Զմիւռնիոյ և առ պատակառ և կրօնական Նախարարութիւնն ի Բ. Դուռն։

Իսկապէս աննկարագրելի է այս ժողովրդական չարժումն, բայց մեք առ այժմ այսչափ համառօտակի ընելով կ՛բաւականանանք։

Եւ որովհետև երկու տարիէն աւելի կ՛լինի որ Շահապաղեան վարդապետի խնդիրն հրապարակի վրայ մեծ և ահագին խնդրոյ մը կերպարանք ստացած է, ուստի արժան կ՛համարուի կարճ խորհրդածութիւն մ՛ևս ընել և ապա վերջացնել սոյն գրուածն։

Արդարև չատերու հետ մեք ևս յաճախ զարմանօք կ՛հարցնեմք թէ ինչ էր պատճառն և ինչ հարկ կար Ազգային Պատրիարքարանի կամ աւելի ճիշդն ասել Վեհափառեան Սրբազանին, որ այս ինքնին պարզ խնդիրն այսչափ կնճռոտեր և ի վերջոյ բարձրագոյն Ատեաններու՝ հասցնէր։

Շահպաղեան վարդապետն՝ իբրև եկեղեցական մը պարտք համարած էր եկեղեցւոյ իրաւունքն պաշտպանելու դիտաւորութեամբ, գրել յօդուած մը Կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ կամ ի մասին Մակար Սրբազանին. եթէ այն յօդուածն դատապարտելի էր յաչս Վեհափետեան Սրբազանի և իր Կրօնական ծողովոյն, պարտաւոր էին երկու տող յայտարարութեամբ օրինական փաստերով մերժել այդ յօդուածն և խընդիրն վերջացնել։ Սակայն տեսանք որ Պատրիարքարան այս օրինական ճանապարհէն խոտորելով հալածանիրութիւնն մինչև վերջի աստիճանի հասուց, անշուշտ այն ԲԱՐԻ դիտաւորութեամբ թէ՝ իր այս ընթացքով կարող պիտի լինի մէկ կողմանէ բուն և հարազատ Աղգընտիր Կաթողիկոսի բարոյական և մեծ արժանիքն նուազեցնել, իսկ միւս կողմանէ այժմեան էջմիածնի քաջահռչակ Գահակալի խարխուլ և ապօրինի դրութիւնը տակաւ ինչ ամրապնդել։ Բայց ով չգիտեր թէ՝ ասոնք ամէնն զուր ջանքեր են։ Եթէ միայն Շահպաղեան վարդապետ լինէր հակառակող և դինող ընդդէմ Մակար Սրբազանի, յայնժամ շատ դիւրին պիտի լինէր այս մէկ վարդապետն ըմբերանել և մինչև իսկ ծովը նետել։ Սակայն խնդիրն այնպէս չէ. այլ քանի որ 1888ի էջմիածնի Համազգային ծողովը միահամուռ իր քուէն Մուրատեանց Սրբազանի տուաւ, քանի որ Կ. Պոլսոյ Երեսփոխանական ծողովը զՄակար Սրբազան «Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինաց հակառակ, էջմիածնի Գահակալին հանգամանաց անհամապատասխան և բացառաբար» Կաթողիկոս ճանչցաւ. ուրեմն կատարուած իրողութեան և Պատմութեան առջև, ոչ թէ միայն այլ քառասուն Վեհապետ Պատրիարքունք իսկ միացած լինին իրենց ծողովներով՝ չեն կարող Մակար Սրբազանի անուան վրայէն սրբել անհարազատութեան յաւիտենական արատն . . . . . ։

Այսպէս պէտք է լինի ամեն մարդոյ համոզումն և դիտակցութիւնն, եթէ ճշմարիտ հայ է և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հարազատ զաւակ։

29 Փետրուար 1888
ի Մաղնիսա։

ՎԱՀԱՆ

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՎԻՊ ՄԸ

Քաղաքական ակմբոց մէջ, կըսե Վիէննայի թղթակից մը, խաղաղու. Թեան կամ պատերազմի խնդիրն չպատճառեր այնքան հետաքրքրութիւն արքան այն արշաւնի վրայն, որ ճիշտ այս պահուս տեղի ունենայու ամուս. նութեամբ Շուէտի թագաւորին երկրորդ որդի Օսկար Շարլ իշխանին մի ծաղկահասակ օրիորդի հետ, որ թէև իրեն ազգակից, բայց չէր արքա. յազուն։ Ահաւասիկ այս յետին ծայր վիպական դէպքին վաւերական և լիուլի մանրամասնութիւնները։

Շուէտի Գահաժառանգ իշխանութիւնն, որ Պատի մեծ Դքսին դուստրն և Վիլհելմ կայսեր Թոռն է, ունէր իր պատուոյ կանոնց մէջ շուէտուհի մը, Օր. Մընկ, որ քաջածանօթ էր իր գեղանի, շնորհալի և չքնաղ վար. վունքին համար, հիացում կ'թողուր ուր որ երթար, մինչև անգամ, երբ Գահաժառանգ իշխանուհին Գերմանիա կ'գանուէր, Վիլհելմ կայսեր ուշադրութիւնն գրաւած էր, որ միշտ երկպապտաւ եղած է գեղեցիկ սե. առին։ Բայց Օր. Մընկ, թէև ծնողեամբ աղնուական, այլ ազքատ և որբ էր։ Իր հայրը գնդապետ Մընկ, մահուանէ ետք թողած էր իրեն իբրև ժառանգութիւն նահանջոց երկայն շարք մը, բոլորն ալ սրի զինուորա. կաններ, բայց չատ քիչ դրամ։ Անգամ մը պատահմամբ Օր. Մընկ, իւր քարեկամաց պնդումներէ ստիպեալ, ընդունեց հեծելազօրաց գունդէ հա. րուստ գեւատի սպայի մը ամուսնութեան առաջարկը։ Ամէն ինչ պատ. բաստուած էր հարսանիքին համար, օրը որոշուած էր, հարսանեկան օժի. տը պատրաստ, և նուէրներն հետզհետէ կ'հասանէին, երբ յանկարծ Օր. Մընկ իմաց իր ամուսնութեան դադրիլը, առարկելով որ իր խօսնոյրին հա. մարումը լիուլի չէր վայելեր։

Ի գէպ ելան ամէն յորդոր և խորհուրդ, օրիորդն անդրդուելի մնաց և պահ մ'արքունիքն հետացաւ։ Երբոր վերադարձաւ անդ իւր առաջին զուարթութն ոգին չունէր, այլ մելամաղձոտութեան քօղ մը ծածկած էր իւր դէմքը, որով առոյգն աւելի չքնաղ և հրապուրելի կ'երևէր։ Այս միջոցիս՝ Օսկար իշխանը նոր կ'վերագառնար աշխարհի բոլորտիքը ըրած երկու տարուան շրջանէ մը։ Վերադարձին քիչ մ'ետք իւր քարեկամները նշմարեցին որ իշխանը կ'սիրէր, ինչ որ զգալի եղաւ նաև գեղանի Օր. Մընքին, որ չէր կրնար անզգայ մնալ դուստր արիասիրտ և գեղեցիկ իշխանին հիացմանն. բայց ի՞նչ կարելի էր ընել։ Շուէտական օրինաց համաձայն այն իշխանը որ կ'ամուսնանայ արքայական շրջանակէն դուրս մերկն հետ, կ'զրկուի գահի իրաւունքին հետ արքայական ընտանիքի անդամակցութեան իրաւունքն։ Օր. Մընկ, կարծելով թէ իր պարզասրտութեան ձայնին կ'պարտասուրի հետևիլ, կրկին անգամ թողուց Շուէտի արքունիքը, յատուկապես յայտարարեց թէ մտադիր է երկիր չամուսնանալ և աղօրմասիրական մեծ հիմնադրութի մը մէջ ապաստանի պաշտօն ստանձնեց։ Օսկար իշխանն ապշած մնաց լսածները լսելով այս լուրը. երկար ժամանակ օրհնէ հան յաջողեցաւ վերջ-

ջապես անոր հանպատրաստ ձանձրույթով կորզեց անոր բերնէն սիրոյ խոստովանութիւն։ Արիասիրտ օրիորդն վերստին մերժեց անոր հետ ամուսնանալ, թէև իշխանը յայտնեց իրեն թէ թագուհին յորդորած էր այս ամուսնութեան մասին իր հաւանութիւնն տալ։ Սակայն դեռ թագաւորին չճշմարտացուցած։ Իզուր Օսկար իշխանը պնդեց թէ, քանի որ իր եղբայրն էր գահաժառանգ իշխանը, որ արդէն զաւակներ ունի, իրեն անկարելի էր գահն ժառանգել, ի զուր ուխտեց Թողուլ արքայական արտօնութիւնները և պարզ քաղաքացի ըլլալ։ Ժամանակը կ'անցներ և Օր. Մբնկ անդրդուելի կ'մնար։ Թագաւորը քաջ կ'տեսներ որ չպիտի կարենար ըստ կարգի համոզել իւր որդին. ի վերջէ Նորին Վեհափառութիւնն դիջաւ, այս ալ գլխաւորապես թագուհւոյն խնդրանաց վրայ, որ բժշկական գործողութեան մը պիտի ենթարկուէր, և որմէ բժշկութիւն անյուսալի էր։ Թագաւորն չկրցաւ մերժել խնդիրն իւր ամենասիրելի կենակցին, որու վրայ կը դուրդուրար և զոր կ'երկնչէր կորուսել, որով այսպէս 300 տարիէ ի վեր առաջին անգամ շուէտի իշխան մը կ'ամուսնանայ պարզ աղնուականի մը ազջկան հետ։ Շուէտական օրենագրքին համաձայն՝ Օսկար իշխանը պիտի կորսընցունէ բացի իւր գահի իրաւունքներէ, իր արքայական վեհմութիւնն, Հօտլանտի Դուքսի տիտղոսները և Յառքօլմի պալատը։ Ապագային պիտի կոչուի իշխան Պերնադոթ, պիտի պահէ միայն իր շուէտական հաւատուրմի հրամանատարութիւնն. սակայն պէտք է ըսել որ իշխանը մարդոց երջանկագոյնը կ'երևի։

Նորին արքայական Բարձրութիւնը և իր սիրասուն նշանածն պիտի ընակերանան Շուէտի Թագուհւոյն Անգլիա յանկարծ վերջերը, Նորին Վեհափառութիւնն մտադրութիւն ունենալով երեք չորս ամիս անցընել ի Պրնիմաութ։ Պատճառը տեղի պիտի ունենայ կամ այդ ջրաւէտ վայրը կամ Լօնտոնի շուէտական եկեղեցին։ Իրենց մեղրալուսնին յետոյ դառնան ամսնալիք պիտի ուղևորին ի Գալլբրօնա, հարաւային Շուէտի հնայոյն կայան մը, ուր իշխանը պիտի հաստատուի։

Վ. Ա.

ԼՐԱԳՐ.

Մեծ. Յովհաննէս Յովհաննեան ի Թիֆլիզ 5000 բուբլի նուիրեր է Ներսէսեան Ազգային Հոգևոր Դպրեվանցին, որպէս զի դրամի տոկոսով Հոգաբարձութիւնը մի որդեգիր պահէ, անուանելով զայն «Ալամդարեանի որդեգիր»,

Վեհափառ Սուլթանն բարեհաճեր է իր բարձր հովանաւորութիւնն շնորհել ի նպաստ Միացեալ Ընկերութեանց տրուելիք պարահանդէսին։ Ն. Կ. Վեհափառութիւնն բարեհաճեր է նաև 150 Օսմանեան ոսկի շնորհել

ի նպաստ նոյն Ընկերութեան ձեռօք խնամեալ ազգասիրական հայ վարժարանաց։—Այժմ գովեստիւ վեր է մեր Օգոստ. վեհապետին սոյն նոր շնորհն, և արժանի՝ ջերմ երախտագիտութեան և խորհին շնորհակալութեան համբէն Հայ ազգին։

Վ. սեմ. Թագուր փաշա Յակոբեան գովանի առատաձեռնութեամբ իր անձնական ծախիւք սկսեր է վերանորոգել Գահերէի Ս. Աստուածածնայ եկեղեցին, որու շուրջն պիտի շինէ նաև հոգեւտուն մը, առաջնորդարան մը, և հիւրանոց մը. որմով պիտի շրջապատուի ազգային գերեզմանատունն, և պիտի նորոգուի անդ գտնուած Ս. Մինասի մատուռն։—Նոբին Վսեմութեան սոյն եկեղեցասիրական և բարեպաշտական գովելի ձեռնարկութիւնք ազգովին շնորհակալութեան արժանի են։ Փափաքելի է որ ազգին մէջ բազմանան Վսեմ. Թագուր փաշաի նման ազգասէր և կրօնասէր անձնաւորութիւնք և հայ մեծատունք հետեւին նորա գովելի օրինակին։

Ա. շքեհան բարեյիշատակ Յակոբ էֆ. իւր յԱղեքսանդրիա աւնեցած եօթն կալուածոց հասոյթն, որ իւր 3000 եգիպտական ոսկի կ'հաշուի, 100 մասի բաժնելով, հետևեալ ազգային կտակներն ըրեր է. 100ին 5 Երուսաղեմի ժառանգաւորաց վարժարանին. 100ին 5 կ. Պոլսոյ Ադ. Հիւանդանոցին. 100ին 3 թալասի մէջ հաստատուած աղջկանց վարժարանին. 100ին 3 կեսարիա գտնուած աղքատ վերդապետաց. 100ին 2 Աղեքսանդրիո Ս. Պօղոս և Ս. Պետրոս վարժարանաց։ Հասոյթին 100ին 40նալ ընդհանուր ազգին կտակեր է սա պայմանաւ որ երբ 40 բաժնի հասոյթն 3000 ոսկի գոյանայ, այս դրամով հետզհետէ կալուածներ գնուին, մինչև որ կալուածոց արժէքը 15000 ոսկւոյ հասնի։ Այս նոր գումարին հասոյթով Աբուեստանոց մը պիտի բացուի Հայաստանի մէջ։ Սոյն կտակն եզած է Հեօճէթի Շերիկեով։—Հանգուցեալ Յակոբ էֆ. Ա. շքեհան իր այս ազգասիրական կտակաւ անմահ անուն և յիշատակ թողուց Հայ ազգին մէջ և անտարակոյս իր ժառանգորդք ջանք չպիտի խնայեն փութաջանելու և դիւրացնելու համար սոյն ազգօգուտ կտակին գործադրութիւնն։

Հալէպի Գաւառական Ընդ. ժողովը քաւէից բացարձակ մեծամասնութեամբ վիճակին առաջնորդ ընտրեր է Գեր. Մովսէս վարդապետ Կէօմրիւքճեան, և այս ընտրութեան արդիւնքն հետագրաւ հաղորդեր է Ներին Գերապատուութեան։

Մովսէս Խորենացւոյ պատմութեան աշխարհագրական թարգմանութիւնն՝ հարուստ ծանօթութեամբ՝ հրատարակուեր է աշխատութեամբ Արժ. Խորէն Ծ. վ. Յակոբեանէ։ Տպագրութեան ծախքը ամբողջովին յանձն է առեր Հայոց բարերգօր Մոսկովաբնակ Պ. Յովհաննէս Ցուվանեան։—Ուրախալի է տեսնել որ Հայր Խորէն վ. Սահակեանի նման հմուտ մանագէտ—պատմադէտի մը ձեռամբ կարևոր պակաս մը կ'լեցուի՝ աւելի հասկանալի և ընդհանուրին մատչելի լեզուաւ Հայ հասարակութեան ընծայելով մեր պատմահօր աշխատութիւնն որ՝ դժբաղդաբար՝ իր լակոնական ոճով և մերթ դարձուած խրթնաբանութեամբ շատերուն դժուարամատչելի մնացած է։

Պօղոյ Խառն Ժողովն վաւերացուցեր է Զմիւռնիոյ Գաւառական ժողովոյ ընտրութիւնն և ընտրելեաց ցանկ մը պատրաստելով ղրկերէ Զմիւռնիոյ Ազգ. վարչութեան. հետևեալ ընտրելիք. Գեր. Խորէն եպիսկոպոս Նար-Պէյ, Գեր. Վահրամ եպիսկոպոս Մանկունի, Արժ. Ներսէս վարդապետ Աբրահամեան։

կարնոյ նորընծաի առաջնորդն։ — Ամեն. Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրատեանց հրաժարած լինելով կարնոյ առաջնորդութենէն, նոյն փողոսն ընդուներ է Ն. Սրբազնութեան հրաժարականն. ուստի վիճակին դատաստական վարչութիւնն նոր ընտրութիւն կատարելով միաձայնութեամբ առաջնորդ ընտրեր է Գեր. Արիստակէս եպիսկոպոս Գերձակեան։

Խիկարի դէպեմբեր և ցունվար ամսաթիւերը հրատարակուեցան յորոց նշանակելի են. փոխ ի բրամբարձունիւն, յորում Աճեմեան էֆ ի Լոյս և Սուրէնն երգիծական գինտատութեան մը բովէն կ'անցնի։ — Ա. Դէնէն տեսարաններ, որսա մէջ հարս ու կեսրոջ միջև տիրող անվերջանալ իգութիւններու մէկ նմուշն կ'տայ և դարմանիներ կ'առաջարկէ։ — Նոր Տարի, յորում անաչառ կերպով կ'քննադատուի անցեալ տարին ազգային տեսակէտով և կ'առանդուի օգտակար դասեր՝ ազգային մէջէն բառնալու զեղծումներն ու մոլութիւնները։ — Կրնա՞ս ասոնք, յորում կ'նշանակուին յանուն կրօնի ի գործ դրուած անվայել միջոցներ։ Նոր Աշխարհ հայոց Աբէդ անուն Թերթին ծագումն . . . կ'գուժուի։

Հանճէնց եկած նամակներ խիստ տխուր գոյներով կ'նկարագրեն քաղաքին մէջ տիրող սոսկ ու թշուառութիւնն. աղքատութիւնն ընդհանուր եղած է. կրօնափոխութիւն և մուրացկանութիւն մէկ միջոց եղած են ապրելու համար։ — Ազգային ընդհանուր գիւութեան և շուտիդիփլեր նպաստի արժանի են տարաբաղդ Հաճնցի ազգայինք։

Պ. Բագրատեան, երևելի վրացի հնագէտ և հայագէտ, ժամանակէ մ'ի վեր Պոլիս կ'գտնուի և կ'այցելէ ազգային հաստատութիւններն և եկեղեցական ու աշխարհական երևելի ազգայնոց տուներն։

Երեւանի դէպքը, — Պաթումէն ճէրէեան ուղղեալ նամակ մը կը պատմէ թէ Երևանի մէջ ամբոխ սկիզբն մի քանի պարսիկներ ջերկէ ժամանակ շուկային մէջտեղը երկու կարճ հայ երիտասարդներու վրայ յարձակելով կ'սպաննէն զանոնք։ Հոյլք դայրանալով պարսից այս գազանական սպաննութեան վրայ, կ'յարձակին պարսից վրայ և անոնցմէ 3 հոգի կ'սպանեն և 15 հոգի ևս կ'վիրաւորեն, այս կռիւ թէև ոստիկանաց միջամտութեամբ վերջ կ'գտնէ, սակայն հայք այս գործին մէջ նշմարելով քաղքին կուսակալ Շալիգօֆի մասն, որ սաստիկ թշնամութիւն մը կ'տածէ հայոց գէմ, 2000ն աւելի բազմութեամբ կուսակալին ապարանքը կ'պաշարեն և Շալիգօֆը դուրս կանչելով ոնարդական խօսքեր կ'ուղղեն նմա, նշմարելս ընդհանուր դատախազը կանչելով՝ նախատալից խօսքերով կ'յանդիմանեն զայն։ Երևանի առաջնորդ Պարղեանց Սուքիաս եպիսկոպոս այս դէպքի լուրն առնելով՝ անմիջապես Շալիգօֆին քով կերթայ և ծանր լեզու մը կը գործածէ և էջմիածին կ'հաղորդէ։ Ասոր վրայ ժողովուրդն թէև կ'էրուի, բայց իրենց բարւոքութեան սաստկութենէն երեք օր խանութ չեն բանար, մինչև որ կառավարութիւնը բռնութեամբ և յորդորանօք կ'ստիպէ բանալ խանութներն։ Մակար Սրբազան այս դէպքն իմանալով կ'հրամայէ որ Երևանցիք յաջորդ օրը Ննդեան և Մկրտութեան տօնին խաչը ջուրը տանելու արարողութիւնը առանձին կատարեն, և ոչ թէ՝ ըստ սովորութեան՝ ինաւասց հետ. հայք կ'կատարեն Մակար Սրբազանի այս հրամանն և իրենց վրէժը լուծած կ'համարեն ինաւսրէն։

Ն.

ԲԱՂԱԴԱԿԱՆ

Անգլիոյ բարվէնդը կ'դումարուի կուսակցութեանց ազդեցիկ պարագլուխներն՝ յատկապէս իրլանտական խնդրոյն, պոռնկական հիմնադրին (Crime's act), ազատ փոխանակութեան և այլ կարևոր խնդիրներու նկատմամբ՝ արձակուրդի առթիւ, թեր ու դէմ ճառեր արձակելէն ետև՝ կ'դառնուին այժմ Ազգային ժողովին առեանն՝ ուր հրատապ խնդիրներ աւելի ուժգնութեամբ պիտի յուզուին և լորտ Սալզպըրիի կառավարութիւնը տագնապելու երևոյթն ունին։ Այդչն իրլանտայի պատճական օրէնքը հասարակ ժողովրդեան վրայ վատ տպաւորութիւն ըրած է և անոր զօրութեամբ պատժուած անգլիացի և իրլանտացի ազատականներ նոր վրէժխնդրութեամբ զինուած՝ յեղափոխական դիրք մը կ'բռնեն, ինչպէս Պ. Գրէհէմ, Պըրնս, և որ արձակ համարձակ արդի բռնակալական դրութեան մասին, կը խօսեն և ազնուապետական իշխանութեան վախճանն ու ռամկավարութեան մօտալուտ գալուստը կ'գուշակեն։ Թէև այդ հրապարակաբեր արտայայտութիւններն Անգլիացւոց պէս ծանրագլուխ ժողովրդեան վրայ չեն կարող սաստիկ ազդել, սակայն հարկ է նկատել որ ժողովրդեան ստուար մասին թշուառութիւնն, ընկերային խորին անհաւասարութիւնն և մուրոզութիւնն ծայրայեղ կարծեաց իսկ ստէպ կչիռ տալով՝ յեղափոխական չարժումներու պատճառ կ'լինին, երբ կառավարութիւններն ընկերային ծանր աղէտից դարմանը ժամանակին չեն հոդար։ Հետևապէս փոխարկալի կ'թուին լինիլ Անգլիոյ բարվէնդի նիստերն, ուր պիտի լուծուին գլխաւորապէս կենսական խնդիրներ։ Թէև մասնական ընտրութիւններն ազատական կուսակցութեան նոր ոյժեր բերին, սակայն, եթէ երբէք, Բարվէնդը լուծուի, չկարծուիր որ Պ. Գլատսդօն յաղթանակը տանի իր ծրագրովն Անգլիոյ և Իտալիոյ մէջ պահպանողական դաշնադրութեան մը զրոյցները հաստատութիւն չդտան և ոչ լորտ Ռ. Զըրչըլի ի Բեղրգպուրի ըրած ուղևորութեան առթիւ տարածուած լուրը թէ՝ Բուսիոյ հետ դաշնակցելով Անգլիա պիտի թողու հիւսիսային մեծ տէրութիւնը գործել անարգել Եւրոպիոյ հարաւային կողմն, եթէ դադրի սպառնալէ Հնդկաստանի, որու փոխարքայն լորտ Տը

Ֆրին հրաժարականը տուած է և կ'ըսուի թէ Հռոմի դեսպան պիտի կարգուի։ Իսկ լորտ Ըէմպրլէյն կ'վերադառնայ Անգլիա՝ Միացեալ–Նահանգաց հետ կարգադրելով Գանատայի ձկնորսութեանց հին խնդիրը, կարգադրութիւն՝ որ պիտի ենթարկի Ուօշինկթընի երեսփոխանաց ժողովոյն հաւանութեան։ Գերմանիոյ կայսեր և գահաժառանգին առողջութեան վիճակն երկիւղալի են։ Պիզմարդ իշխանին հաշակառար ճառն Գերմանիոյ ազգային ժողովին մէջ, կ'վարատէ պահ մը մութ ամպեր որոց մէջ պատերազմի փայլակներ կ'երևէին, և Եւրոպայի քառասնամեայ անցից պատմական տեսութեամբ իշխանը կ'բացատրէ Գերմանիոյ քաղաքական ընթացքն և արդի խաղաղասիրութիւնն, կը մեկնէ 1879ին Գերմանիոյ և Աւստրիոյ կռած և նոր լոյս ընծայուած նիզակակցական դաշնց նպատակն, որ է երկու տէրութեանց միացեալ պահպանութիւնն Ռուսիոյ յարձակման դէմ, և խաղաղութեան պահպանումն։ Պիզմարդ իշխանն կ'պնդէ նաև թէ Պէրլինի դաշնագրի դործադրութեան ձեռնտու պիտի դտնուի թէ Ռուսիա իրաց նախորդ վիճակը Պուլկարիոյ մէջ վերահաստատելու ձեռնարկէ։ Եւ թերևս այս խոստումէ յորդորուած՝ Ռուսիա ակսած է այդ ձեռնարկն և մեծ Տէրութեանց համաձայնութիւնը կ'խնդրէ որպէս զի Ֆէրտինանտ իշխանն՝ Ռ. Դրան վեհապետական միջնորդութեամբն, արտաքսել տայ, ասանց սակայն յայտնելու թէ ոմն պիտի լինի անոր յաջորդն և ինչ է իր ապագայ յառակագիծն՝ եթէ ոչ անիշխանութեան մատնել Պուլկարիան։ Արդէն Ֆրանսա և Գերմանիա այս առաջարկին ձեռնտու են։ Ֆրանսա վերստին կ'տատանի կուսակցութեանց մէջ և Պաշտօնէութիւնն անկայուն վիճակ մ'ունի։ Իսկ Պ. Ռիվըօն՝ նախորդ նախագահին փեսան՝ որ չքաղչանի առուտուրով ամբաստանուած էր, ծանր պատժոյ կ'դատապարտուի։

Խմբագիր–Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ